

# ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

Աչքս չեմ թարթելու, հարկ եղած  
դեպքում, «Իսկանդերի»  
համազարկի հրամանն արձակելիս.  
**Սերժ Սարգսյան**



# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....14
- 4- Սփյուռք.....16
- 5- Միջազգային.....21
- 6- Մշակույթ.....22

## Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-2
- Ռաֆաել Նահապետյան.....3-4
- Հայ գրականության նմուշներ.....5

## Շապիկի առաջին էջում՝ «Իսկանդեր»

**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 221, Մարտ 2017 No. 221, March 2017

ماهنامه لويس - شماره ۲۲۱ فروردین ماه ۱۳۹۶

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

# ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝  
**Էդ. Բաղդասարյան**  
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան  
Փոստարկղ **15875-9488** Թեհրան - Իրան  
Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

## LOUYS

### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
պարտադիր է:

## ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت : [www.louysonline.com](http://www.louysonline.com)

# Այս չեն թարթելու, հարկ եղած դեպքում, «Իսկանդերի» համագարկի հրաման արձակելիս. Մերժ Սարգսյան



25.03.2017

Այսօր Հայաստանի զինուժի գերագույն գլխավոր հրամանատարն այքը չի թարթելու, հարկ եղած դեպքում, «Իսկանդերի» համագարկի հրաման արձակելիս: Այս մասին, այսօր՝ մարտի 25-ին, Արցախում զինժառայողների եւ նրանց ընտանիքի անդամների առջև իր ելույթի ժամանակ հայտարարել է ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը:

Նա, իր ելույթում, մասնավորապես, նշել է.

«Անցած ապրիլին մենք հետ շարտեցինք միջազգային պայմանավորվածությունները դրժած հակառակորդին բոլոր ուղղություններով, մենք տապալեցինք նրանց պլանները, մենք կատարելապես ջախջախեցինք նրանց՝ այդ օրերի տեղեկատվական պատերազմում, մենք մի տարվա ընթացքում այնքան ամրացրինք սահմանն ու զինեցինք զորքը, որ այսօր մեր առաջնագիծն ուղղակի անճանաչելի է դարձել: Այսօր մեր տղաները հետեւում են հակառակորդի տեղաշարժին նրա տարածքի խորքում արդեն: Այսօր պատերազմատենչ հարեւանի տարածքի բոլոր ուղղություններով, ընդհուպ մինչեւ ամենակարեւոր ենթակառուցվածքներ, գերժամանակակից հզոր հարվածային ուժ է ուղղված: Եվ այսօր Հայաստանի զինուժի գերագույն գլխավոր հրամանատարն այքը չի թարթելու, հարկ եղած դեպքում, «Իսկանդերի» համագարկի հրաման արձակելիս: Ու դա հարեւան երկրում շատ լավ գիտեն:

Մենք այլևս երբեք միլիոնավոր նահատակների սրբադասում չենք անելու: Հաստատ չենք անելու»:

**Հայաստանի Հանրապետություն**

**ԿԸՀ-ն հրապարակեց ԱԺ ընտրությունների նախնական արդյունքները. ԱԺ-ում ներկայացված կլինի 4 ուժ**

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրեթե ամբողջությամբ հաշվարկել է խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքները: Ժամը 12:00-ի դրությամբ ստացվել են բոլոր 2009 տեղամասերի տվյալները: Մեծ առավելությամբ առաջատարը իշխող Հանրապետական կուսակցությունն է՝ 49,12 տոկոս:

- «Ելք» դաշինք- 7,77 (122 049 ձայն)
- «Ազատ դեմոկրատներ»-0,94 (14 746)
- «Հայկական վերածնունդ»-3,71 (58 277)
- «Ծառուկյան» դաշինք-27,32 (428 965)
- Կոնգրես-ՀԺԿ» դաշինք-1,65 (25 975)
- Հանրապետական կուսակցություն- 49,12 (771 247)
- Կոմունիստական կուսակցություն-0,75 (11 745)
- «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինք-2,7 (32 504)
- ՀՅ Դաշնակցություն-6,57 (103 173)

Նշենք, որ ԿԸՀ նախնական տվյալներով, ընտրություններին մասնակցել է քվեարկելու իրավունք ունեցող 2 մլն 588 հազար 590 քաղաքացիներից 1 մլն 577 հազար 323 քաղաքացի կամ քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների 60,93 տոկոսը:

Ընտրություններին մասնակցել են 5 կուսակցություններ եւ 4 դաշինքներ: Խորհրդարան անցնելու համար կուսակցություններին անհրաժեշտ է ստանալ ընտրողների քվեների 5 տոկոսը, դաշինքներին՝ 7 տոկոսը:

ՄԱՍԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐ

«ԵԼՔ» ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ	121 997	7,78%
«ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ» ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	14 740	0,94%
«ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	58 274	3,72%
«ՕՍԿԱՆՅԱՆ» ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ	428 962	27,35%
ԿՈՆԳՐԵՍ - ՀԺԿ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ	25 973	1,66%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	770 718	49,15%
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11 742	0,75%
«ՕՍԿԱՆՅԱՆ-ԲԱՖՖԻ-ՕՍԿԱՆՅԱՆ» ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՇԻՆՔ	32 487	2,07%
ՀԱՅ ԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔՈՒԹՅՈՒՆ ԿՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	103 148	6,58%
ՄԵԿԱՎԵՐՏԵՂԱԿԱՆ ԲԱՍԿԻՑ	2 009	

**Խորհրդարան մտած քաղաքական ուժերին ամենաշատ ձայներ բերած թեկնածուները**

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում Ազգային ժողով մտած քաղաքական ուժերից Հայաստանի հանրապետական կուսակցությանը ամենաշատ ձայն բերած տարածքային պատգամավորի թեկնածուն Արարատի մարզում առաջադրված Արայիկ Գրիգորյանն է («Ավլար»-ի Արայիկ)՝ 45.339 ձայն:

ՀՀԿ-ին երկրորդ ամենաշատ ձայն բերած թեկնածուն է Լոռու մարզը ընդգրկող թիվ 9 ընտրական տարածքում տարածքային ցուցակով առաջադրված, «Տաշիր գրուպ»-ի սեփականատերերից Կարեն Կարապետյանը՝ 44255 ձայն, իսկ երրորդ տեղում Երևանի Շենգավիթ, Մալաթիա-Մերաստիա վարչական շրջաններն ընդգրկող թիվ 3 ընտրական տարածքում տարածքային

թեկնածու, գործարար-պատգամավոր Սամվել Ալեքսանյանն է՝ 42 472 ձայնով:

Խորհրդարան անցած «Ելք» դաշինքին ամենաշատ ձայնը բերել է Երևանի Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջաններն ընդգրկող թիվ 4 ընտրական տարածքում առաջադրված Նիկոլ Փաշինյանը՝ 11513 ձայն, դաշինքի համար առավելագույն ձայն բերած մյուս թեկնածուն է Կոտայքի մարզն ընդգրկող թիվ 10 ընտրական տարածքում առաջադրված Սասուն Միքայելյանը, նա հավաքել է 6652 ձայն, եւ Լոռու մարզը ընդգրկող թիվ 9 ընտրական տարածքում առաջադրված Էդմոն Մարտիրոսյանը, որը հավաքել է 6123 ձայն:

«Ծառուկյան» դաշինքի համար ամենաշատ ձայնը բերել է Արարատի մարզն ընդգրկող թիվ 5 ընտրական տարածքում առաջադրված Գագիկ Ծառուկյանի փեսա Արզամ Աբրահամյանը՝ 34.415 ձայն, թիվ 10 ընտրատարածքում առաջադրված թեկնածու Դավիթ Մանուկյանը 20.761 ձայն, Շիրակի մարզն ընդգրկող թիվ 11 ընտրական տարածքում առաջադրված Գյումրիի Մանկավարժական ինստիտուտի նախկին ռեկտոր Վարդուհան Գրիգորյանը՝ 13.990:

Հայ Հեղափոխական Դաշնակցության թեկնածուներից էլ ամենաշատ ձայն հավաքողը Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 13 ընտրական տարածքում առաջադրված Մուրեն Մանուկյանն է՝ 5274 ձայնով, այնուհետեւ Գեղարքունիքի մարզն ընդգրկող թիվ 8 ընտրական տեղամասում տարածքային թեկնածու Էլիան Սաղաթելյանը՝ 3458 ձայն, եւ Արագածոտնի մարզն ընդգրկող թիվ 7 ընտրական տեղամասում առաջադրված Տարոն Տոնոյանը՝ 3158 ձայնով:

Նշենք, որ ԿԸՀ-ն հրապարակել է ԱԺ ընտրությունների նախնական արդյունքները, ըստ որոնց՝ արդյունքները բաշխվել են հետեւյալ կերպ. Հանրապետական կուսակցություն- 49,12 տոկոս, «Ծառուկյան» դաշինք՝ 27,32 տոկոս, «Ելք» դաշինք՝ 7,77 տոկոս, ՀՅԴ՝ 6,57 տոկոս: Ըստ այդմ, ՀՀԿ-ն կստանա 58 մանդատ, «Ծառուկյան դաշինքը՝ 31 մանդատ, «Ելք» դաշինքը՝ 9 մանդատ եւ ՀՅԴ-ն՝ 7 մանդատ: Ընտրություններին մասնակցած մնացած 5 ուժերը («Ազատ դեմոկրատներ, «Հայկական վերածնունդ», ՕՐՕ դաշինք, «Կոնգրես-ՀԺԿ» դաշինք եւ Կոմկուս) չեն հաղթահարել ԱԺ-ում հայտնվելու նվազագույն շեմը:

ԿԸՀ նախնական տվյալներով, ընտրություններին մասնակցել է քվեարկելու իրավունք ունեցող 2 մլն 588 հազար 590 քաղաքացիներից 1 մլն 577 հազար 323-ը:

**Ո՞ր ուժը քանի մանդատ կստանա նոր խորհրդարանում. ՀՀԿ-ն ստանում է կայուն մեծամասնություն**

Ըստ ԱԺ ընտրությունների նախնական տվյալների, Հայաստանի նոր Ազգային ժողովի 105 մանդատներից 58-ը բաժին կհասնի ՀՀԿ-ին, 31 մանդատ բաժին կհասնի «Ծառուկյան» դաշինքին, 9 մանդատ՝ «Ելք» դաշինքին եւ 7 մանդատ՝ ՀՅԴ-ին:

Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ մանդատները բաշխվում են հետեւյալ կերպ. Ազգային ժողով է անցել 4 քաղաքական ուժ: Նրանցից յուրաքանչյուրի մանդատը հաշվարկում է այսպես. տվյալ ուժի ստացած ձայների թիվը բազմապատկվում է 101-ով (ԱԺ-ի մանդատների նվազագույն թիվը), սպա բաժանվում այդ 4

ուժերին կողմ քվեարկած ընտրողների ձայների գումարի վրա:

ԱԺ անցնելու համար նվազագույն շեմը հաղթահարած 4 քաղաքական ուժերը միասին ստացել են 1 425 434 ձայն: Այսինքն՝ եթե ՀՀԿ-ն ստացել է 771 247 ձայն, ապա այդ թիվը բազմապատկվում է 101-ով, ապա բաժանվում 1 425 434-ի: Ստացվում է 54,6 մանդատ:

Նույն մեխանիզմով «Ծառուկյանը» դաշինքին բաժին է հասել 30,3 մանդատ, «Ելք» դաշինքին՝ 8,6 մանդատ, ՀՅԴ-ին՝ 7,3 մանդատ: Նրանց ստացած մանդատների ամբողջական թվերի գումարը 99 է: Այսինքն՝ եւս երկու մանդատ պետք է բաշխվի այդ 4 ուժերի միջև:

Քանի որ այդ 4 ուժերի ստացած մանդատների թվերի մեջ տասնորդականների մեծությամբ առաջինն են ՀՀԿ-ն ու «Ելք» դաշինքը, ապա նրանք ստանում են մեկական մանդատ:

Այսինքն՝ արդյունքում ստացվում է, որ ՀՀԿ-ն ստանում է 55 մանդատ, «Ծառուկյան» դաշինքը՝ 30 մանդատ, «Ելք» դաշինքը՝ 9 մանդատ եւ ՀՅԴ-ն՝ 7 մանդատ:


Բացի դրանից, Ընտրական օրենսգրքով 4 տեղ հատկացվում է ազգային փոքրամասնություններին: Բանաձեռի կիրառմամբ այդ 4 մանդատներից 3-ը բաժին է հասնում ՀՀԿ-ին, իսկ մեկ մանդատ՝ «Ծառուկյան» դաշինքին: Արդյունքում ՀՀԿ-ի մանդատների թիվը դառնում է 58, «Ծառուկյան» դաշինքինը՝ 31, «Ելք» դաշինքինը մնում է 9, եւ ՀՅԴ-ինը՝ 7: ԱԺ-ն բաղկացած կլինի 105 պատգամավորից:

Այսպիսով՝ ՀՀԿ-ն խորհրդարանում ստանում է մանդատների 55,2 տոկոսը: Դա բավարար է կայուն մեծամասնության համար եւ ՀՀԿ-ն առանց որեւէ ուժի հետ կոալիցիա կազմելու կարող է ձեւավորել կառավարություն:

Նշենք, որ ԿԸՀ-ն հրապարակել է ԱԺ ընտրությունների նախնական արդյունքները, ըստ որոնց՝ արդյունքները բաշխվել են հետեւյալ կերպ. Հանրապետական կուսակցություն- 49,12 տոկոս, «Ծառուկյան» դաշինք՝ 27,32 տոկոս, «Ելք» դաշինք՝ 7,77 տոկոս, ՀՅԴ՝ 6,57 տոկոս: Ընտրություններին մասնակցած մնացած 5 ուժերը («Ազատ դեմոկրատներ, «Հայկական վերածնունդ», ՕԲՕ դաշինք, «Կոնգրես-ՀԺԿ» դաշինք եւ Կոմկուս) չեն հաղթահարել ԱԺ-ում հայտնվելու նվազագույն շեմը:

ԿԸՀ նախնական տվյալներով, ընտրություններին մասնակցել է քվեարկելու իրավունք ունեցող 2 մլն 588 հազար 590 քաղաքացիներից 1 մլն 577 հազար 323-ը, կամ 60,93 տոկոսը:

## Վլադիմիր Պուտինը շնորհավորել է Սերժ Սարգսյանին՝ ՀՀԿ-ի հաղթանակի կապակցությամբ



Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորական հեռագիր է հղել Նախագահ, Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահ Սերժ

Սարգսյանին՝ ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ի հաղթանակի առիթով.

«Հարգելի՛ Սերժ Ազատի, Ընդունեք անկեղծ շնորհավորանքներս Հայաստանում կայացած Ազգային ժողովի ընտրություններում Հանրապետական կուսակցության հաղթանակի կապակցությամբ:

Ժողովրդական քվեարկության արդյունքները լիովին հաստատեցին այն բարձր վստահությունը, որն անձամբ Դուք եւ Ձեր գլխավորած կուսակցությունը վայելում են Հայաստանի քաղաքացիների շրջանում: Դա նաեւ սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված արդիական խնդիրների լուծման, Հայաստանի ազգային շահերի պաշտպանության հարցում Ձեր վաստակի ընդունումն է:

Վստահ եմ, որ նոր կազմով Ազգային ժողովի գործունեությունը նպաստելու է մեր երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական, դաշնակցային հարաբերությունների հետագա ամրապնդմանը:

Օգտվում եմ առիթից, որպեսզի Ձեզ եւ Ձեր զինակիցներին մաղթեմ նոր հաջողություններ, իսկ Հայաստանի եղբայրական ժողովրդին՝ բարեկեցություն եւ բարգավաճում», -ասված է ՌԴ Նախագահի շնորհավորական հեռագրում:

## Ընտրությունները լավ էին կազմակերպված. ՄԻջազգային դիտորդներն ասել են Նալբանդյանին



Ապրիլի 3-ին արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունեց խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող մի շարք պատվիրակությունների ղեկավարների՝ ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդների հատուկ համակարգող Իգնասիո Սանչես Ամորին, ԵԱՀԿ ԽՎ դիտորդական առաքելության ղեկավար Գեյր Յորգեն Բեկեւոլդին, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության ղեկավար Յան Պետերսենին, ԵԽԽՎ առաքելության ղեկավար Լիլիան Մորի Պասքեին, Եվրոպական խորհրդարանի պատվիրակության ղեկավար Հայդի Հաուտալային եւ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ տնօրեն Միխաել Գեորգ Լինկին:

Հյուրերը նախարարին ներկայացրին իրենց նախնական եզրակացությունները եւ դիտարկումները: Նրանք բարձր գնահատեցին իշխանությունների կողմից Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումները: Հյուրերը ողջունեցին նոր ընտրական օրենսգրքի ընդունումը եւ ընդգծեցին, որ, չնայած իրենց նախնական զեկույցում

նշված բացթողումներին, ընտրությունները լավ էին կազմակերպված:

Հանդիպմանը Հղվարդ Նալբանդյանը նշեց, որ կայացած ընտրությունները շատ կարելու էին խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու ճանապարհին: Այս առումով իրականացված բարեփոխումների բոլոր փուլերում Հայաստանի իշխանությունները սերտորեն համագործակցել են միջազգային գործընկերների հետ, որոնք բարձր են գնահատել այդ գործընթացը: Նախարար Նալբանդյանը շեշտեց, որ ընտրական գործընթացի բարեփոխումների նպատակն էր անցկացնել ազատ և արդար ընտրություններ, ինչի վկայությունն են կայացած ընտրությունները:

Հայաստանի արտգործնախարարը հատկապես ընդգծեց ընտրական օրենսգրքի մշակման ներառական բնույթը՝ խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչն էական քայլ էր ընտրական գործընթացի հանդեպ հանրային վստահության առավել ամրապնդման ուղղությամբ:

Նախարարի խոսքերով, հիմնարար ազատությունների ապահովումը, ընտրությունների գործընթացի պատշաճ կազմակերպումը, ընտրացուցակների ճշգրտության զգալի բարելավումը, քաղաքական ուժերի համար հավասար և մրցակցային պայմանների ստեղծումը, նոր տեխնիկական միջոցների կիրառումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեների հաշվարկի թափանցիկությունը մեծապես նպաստեցին ընտրական գործընթացի հաջողությանը:

Նա հավելեց, որ աննախադեպ է ընտրություններից հետո ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը՝ ընտրական գործընթացին հավելյալ թափանցիկություն հաղորդելու համար: Նախարարը նաև ընդգծեց, որ պետության կողմից խրախուսվել է և որևէ կերպ չի սահմանափակվել դիտորդների ներգրավումը, որոնց թիվը կազմել է շուրջ 30 հազար, ընտրությունները լուսաբանելու համար հավատարմագրվել էր շուրջ 1200 լրագրող:

Դիտորդական առաքելությունների ղեկավարները շնորհակալություն հայտնեցին ընտրությունները դիտարկելու հրավերի համար: Նրանք գոհունակություն հայտնեցին Հայաստանի իշխանությունների կողմից դիտորդական առաքելությունների համար նպաստավոր աշխատանքային պայմաններ ապահովելու, ինչպես նաև սերտ համագործակցության համար:

Երկուստեք կարելու էր ընտրական գործընթացների ուղղությամբ հետագա փոխգործակցությունը:

## «Հ-ում արվում է հնարավորը՝ չեզոքացնելու Ադրբեջանի ու Թուրքիայի բացասական քարոզչության ազդեցությունը»

Հայաստանի տեղեկատվական միջավայրն առանձնահատուկ է այն առումով, որ գտնվում է հարևաններ Թուրքիայի ու Ադրբեջանի բացասական քարոզչության, հակահայկական նախաձեռնությունների թիրախում: Այդ մասին այսօր՝ մարտի 21-ին, «Ճգնաժամից դեպի զարգացում» սնվելով հաղորդակցությամբ» խորագրով WCFDavos/Yerevan ֆորումին հայտարարել է Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի (APRA) նախագահ Արա Սաղաթեյանը:

Նշենք, որ Երևանում, այսօր՝ մարտի 21-ին, մեկնարկել է WCFDavos/Yerevan երկօրյա ֆորումը, որը կազմակերպվել է Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիայի (APRA) և Դավոսի հաղորդակցության համաշխարհային ֆորում ասոցիացիայի (World Communication Forum Association) համատեղ ջանքերով:

Նրա խոսքով, փաստ է, որ հաղորդակցության և դրա կառավարման կարելությունն աշխարհում աճում է. «Օրեցօր զարգացող և փոփոխվող տեղեկատվական միջավայրը ստեղծում է նոր հնարավորություններ՝ միաժամանակ առաջ բերելով նոր մարտահրավերներ: Մենք գործում ենք հետճշմարտային քաղաքականության պայմաններում “post-truth politics”, որը բնութագրվում է սոցիալական ցանցերի դարաշրջանում փաստերի կարելության պայմանական նվազմամբ, որոնց փոխարեն առաջին պլան են մղվում այդ փաստերի մեկնաբանությունները և դրանց հետ կապված հույզերը: Սա տասնապատիկ ավելացնում է հաղորդակցության և դրա ուղիների կառավարիչների դերը և պատասխանատվությունը: Արդի իրականությունը վերահաստատում է մասնագիտական մոտեցումը, համաձայն որի՝ մեր աշխատանքը ոչ թե ծառայություն է, այլ առաքելություն է դարձել»,- ասաց Արա Սաղաթեյանը:

Դիմելով օտարերկրյա գործընկերներին և ներկայացնելով հայաստանյան իրականությանը՝ Ա. Սաղաթեյանն ընդգծեց.

«Մեր երկրի տեղեկատվական միջավայրն ունի մի շարք առանձնահատկություններ: Մենք գտնվում ենք առնվազն Թուրքիայի և Ադրբեջանի բացասական քարոզչության, հակահայկական նախաձեռնությունների թիրախում: Միաժամանակ, Հայաստանում արվում է ամեն հնարավորը, որպեսզի նվազեցվի ագրեսիվ արտաքին տեղեկատվական հոսքերի բացասական ազդեցությունը հասարակության վրա: Բոլորիս համար խոսքի և մամուլի ազատությունը ու դրանց շարունակական զարգացումն այն արժեքներն են, որոնք առաջնային են ժողովրդավարական գործընթացների համատեքստում: Հաղորդակցության և մեդիա ոլորտի մասնագետները շարունակում են փնտրել այն ուղիները, որոնց շնորհիվ լիարժեք կապահովվի տեղեկատվության հասանելիությունը, խոսքի ազատության իրավունքի իրացումն ու, միաժամանակ, տեղեկատվության փոխանակման արդյունքում անվտանգության նոր սպառնալիքներ ի հայտ չեն գա: Այս առումով հատկապես կարելու է իշխանության և հասարակության, քաղաքական գործընթացներին մասնակցող բոլոր ուժերի միջև շարունակական երկխոսությունը ավանդական ՉԼՄ-ների և նոր հարթակների միջոցով»:

## Կոմունիստներ. Խորհրդային տարիները հայ ժողովրդի պատմության «ուկեղարն» էին

Խորհրդային տարիները հայ ժողովրդի պատմության «ուկեղարն էին»: Այսօր՝ մարտի 26-ին, Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքում ընտրողների հետ հանդիպման ժամանակ ասել է Կոմկուսի նախագահ Տանատ Սարգսյանը: «Մենք Ազգային Ժողով ենք գնում ծրագրով, որը կնպաստի քաղաքական վիճակի բարելավմանը, մենք Ազգային Ժողով ենք գնում ավելի կազմակերպված: Այսօր քաղաքական դաշտում գործող ուժերը, որոնք մտել են նախընտրական պայքարի մեջ, անգամ չունեն ելմենտար ծրագիր»,- ասել է նա:



Տաճատ Սարգսյանն անդրադարձել է արտագաղթին՝ նշելով, որ գլխավոր պատճառը երկրում տիրող ծանր սոցիալական իրավիճակն է, վարկերը, որոնց պատճառով ժողովուրդն իր ունեցվածքը գրավադրում է բանկերում, վերջում էլ դրանք թողնելով՝ հեռանում երկրից. «Յուրաքանչյուր երկրորդ ընտանիք կախման մեջ է բանկերից, արդյունքում ունեցած-չունեցածը տալիս են ու արտագաղթում»:

### Իմ դերը կունենամ. Մերժ Սարգսյանը խոսել է 2018 թվականից հետո իր պլանների մասին

25.03.2017

Ես հիմա չգիտեմ՝ ինչ քաղաքական կառուցվածք կլինի 2018-ին, բայց եթե իմ գլխավորած քաղաքական ուժը հաղթի գալիք ընտրություններում, ապա այդ պահի դասավորությունից ելնելով ինչ-որ կարգավիճակում իմ դերը կունենամ մեր ժողովրդի անվտանգության ապահովման հարցում: Այս մասին, այսօր՝ մարտի 25-ին, Արցախում զինձառայողների եւ նրանց ընտանիքի անդամների առջև իր ելույթի ժամանակ հայտարարել է ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը:

«Ինձ անընդհատ հարցնում են՝ ինչ եմ անելու 2018 թվականից հետո: Ես իմ կյանքի ընթացքում իրոք երբեք չեմ պլանավորել, թե հաջորդ հանգրվանին որտեղ եմ լինելու: Միշտ հայտնվել եմ այնտեղ, որտեղ մեր անվտանգությանն ավելի պիտանի եմ եղել: Ես հիմա չգիտեմ՝ ինչ քաղաքական կառուցվածք կլինի 2018-ին, բայց եթե իմ գլխավորած քաղաքական ուժը հաղթի գալիք ընտրություններում, ապա այդ պահի դասավորությունից ելնելով ինչ-որ կարգավիճակում իմ դերը կունենամ մեր ժողովրդի անվտանգության ապահովման հարցում: Չգիտեմ դա ինչ կարգավիճակ կլինի, բայց հաստատ որևէ ձևաչափով օգտակար կլինեմ», ընդգծել է նա:

Մերժ Սարգսյանի խոսքով, այսօր ավելի կարևոր հարց ունենք. «Մենք պիտի հասկանանք, որ ապրիլի 2-ը խաղ չէ, սուտ շուտասելուկների մրցույթ չէ, մենք պիտի հասկանանք, որ ապրիլի 2-ին մենք տանիքների վրա լավ ցատկոդներ չենք ընտրում, մենք մեր ժողովրդի գոյության իրավունքը պաշտպանողներ ենք ընտրում, մենք համազարկի, հարձակման և հարկ եղած դեպքում հետ քաշվելու հրաման տվողներ ենք ընտրում, դա անելու համար բավարար ներքին ուժ ունեցողներ ենք ընտրում:

Ընտրում ենք, թե ում հրամանատարության ներքո են այս տղաներն ավարտելու իրենց ծառայությունը, հաջորդները ծառայելու, ովքեր են պաշտպանելու մեր մանուկների անհոգ ուսման իրավունքն ու մեր մեծերի մայրամուտը: Հասկանում ենք արդյոք մենք սա, թե՛ ոչ, բայց քվեատուրի փին մոտենալիս ուղղակի պարտավոր ենք հասկանալ»:

### Սամվել Բաբայանին մեղադրանք առաջադրվեց. Նա 2 ամսով կալանավորվեց

24.03.2017



Երևանի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը քիչ առաջ 2 ամսով կալանավորել է Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանին: Այս տեղեկությունը գրույցում հաստատեց նրա պաշտպան Ավետիս Քալաշյանը:

Թե ինչ մեղադրանք է առաջադրվել Բաբայանին, փաստաբանը նշել չցանկացավ: Նա ասաց միայն, որ մեղադրանքն անհիմն է:

Ավելի վաղ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն էր տարածել եւ հայտնել, որ Սամվել Բաբայանը ձերբակալվել է Հայաստանի Հանրապետություն «Իգլա» տեսակի զենիթա-հրթիռային համալիր տեղափոխելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում:

### Ռ-Դ ԱԳՆ-ն հերքել է Վրաստանից Հայաստան ռազմական շարսայուն անցնելու մասին հաղորդագրությունները

24.03.2017



Ռ-Դ ԱԳՆ-ում հայտարարել են, որ Ռուսաստանից Աբխազիա C-300 զենիթահրթիռային համալիրներ ուղարկելու մասին լուրերը չեն համապատասխանում իրականությանը, հաղորդում է «Ինտերֆաքս»-ը:

«Քարոզական աղմուկի համար առիթ է դառնում ամեն ինչ՝ եւ Աբխազիայի օրինաչափ որոշումը՝ օպտիմիզացնել անցակետերի թիվը Վրաստանի հետ իր սահմանին, եւ երկկողմանի համաձայնագիրը, որը Հարավային Օսեթիայի քաղաքացիներին թույլ է տալիս անհատական պայմանագրերով ծառայել ռուսական բանակում, եւ իբր թե Աբխազիայում հավելյալ C-300 դիվիզոնի տեղակայման մասին լուրերը: Եւ արդեն ամբողջությամբ ֆանտաստիկ մի պատմություն՝ Վրաստանից Հայաստան ռազմական շարսայուն անցնելու մասին», - ասվում է Ռ-Դ ԱԳՆ կայքի հաղորդագրությունում:

Ռ-Դ ԱԳՆ-ում նշել են, որ այդ ամբողջ քաղաքական թատրոնը նվիրված է մարտի 28-29-ին Ժնևում կայանալիք քննարկումների հերթական փուլին:

«Ըստ երևույթին, Թբիլիսին պատրաստվում է շարունակել ժնեյան հարթակում եկեղեցույթյան սարքածը: Ահա եւ ձեւավորվում է ճիշտ ժամանակին համապատասխան առճակատային- հիստերիկ մթնոլորտ», - ասվում է հաղորդագրությունում:

## Մահացել է Վլադիմիր Բարխուդարյանը. Հոգեհանգիստը կլինի Կոնդի եկեղեցում

24.03.2017



90- տարեկանում մահացել է ականավոր պատմաբան, ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայից հայտնում են, որ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի հոգեհանգիստը տեղի կունենա 2017 թ. մարտի 25-ին ժամը 18.00-ին՝ Երեւանի Ս.Հովհաննես /Կոնդ/ եկեղեցում: Քաղաքացիական հոգեհանգիստը տեղի կունենա 2017 թ. մարտի 26-ին ժամը 12.00-ից 14.00-ը, ՀՀ ԳԱԱ նախագահության շենքում (Մարշալ Բաղրամյանի պող., 24):

Վլադիմիր Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. սեպտեմբերի 22-ին Վրաստանի Մառնեուլի շրջանի Աղքյորփի հայկական գյուղում, ծառայողի ընտանիքում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1945 թ., նա ընդունվում է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ եւ այն հաջողությամբ ավարտում 1950 թ.: Նույն տարում ընդունվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

Ասպիրանտական ուսումնառության տարիներին ակադ. Ս. Տ. Երեմյանի ղեկավարությամբ մասնագիտացել է Հայաստանի միջնադարյան պատմության հարցերում: 1954 թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, 1968 թ.՝ դոկտորական ատենախոսությունները:

Վ. Բարխուդարյանը աշխատանքային առաջին մկրտությունը ստացել է Հայաստանի պատմության պետական թանգարանում՝ որպես կրտսեր գիտական աշխատող (1955--1958): 1958 թ. նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր (1958-1959), այնուհետեւ՝ ավագ (1963-1967), գիտաշխատող, գիտքարտուղար (1959-1963), փոխտնօրեն (1967-1990): 1990 թ. նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱ նախագահությունում՝ որպես ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար (1990-2000), ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս քարտուղար (2000-

2005), ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար (2005-2006), ՀՀ ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար (2006-2011), ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական (2011-2017 թ.):

Վ. Բարխուդարյանի գիտական գործունեությունն ընթացել է հայկական գաղթավայրերի, պատմագիտության եւ հայթուսական հարաբերությունների հիմնահարցերի մշակման ուղղությամբ: Նա առաջին մասնագետներից էր, որ, գիտակցելով գաղթավայրերի պատմության հետազոտության կարևորությունը, դարձավ այդ ուղղության համակարգված ու գիտական նորովի ուսումնասիրության սկզբնավորողներից մեկը:

«Նոր-Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» (հ.1-2, Երեւան, 1967, 1985) մենագրության մեջ աղբյուրագիտական հարուստ հենքով լուսաբանել է հայկական գաղութի տնտեսական, հասարակական քաղաքական եւ մշակութային պատմությունը:

Վ. Բարխուդարյանի ուսումնասիրությունն ակնառու է դարձնում հայկական գաղութի նշանակալի դերը հարավային Ռուսաստանի՝ Նովոռոսիայի գրեթե ամբողջաբնակ տափաստանները յուրացնելու, ամեւտրատնտեսական կյանքը զարգացնելու գործում:

Վ. Բարխուդարյանի՝ պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների եւ Սփյուռքի պատմություն» բաժնի ղեկավարության ներքո՝ ստեղծվեցին հայ գաղթավայրերի պատմությանը նվիրված մի շարք հոդվածների ժողովածուներ. «Հայինգարական պատմական եւ մշակութային կապերի պատմությունից», «Հայ ազատագրական շարժումները եւ հայկական գաղթավայրերը 16-18-րդ դարերում» (1985), «Էջեր հայ գաղթավայրերի պատմության» (1996):

Վ. Բարխուդարյանը լուրջ ներդրում է ունեցել անկախություն ձեռք բերելուց հետո դպրոցներում պատմության դասագրքերի ստեղծման գործում:

Հասկանալի պատճառներով անհնար էր դարձել նախկին դասագրքերով հայոց պատմության դասավանդումը: Նրա խմբագրությամբ լույս տեսան հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող չորս դասագիրք:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը երկար տարիներ եղել է ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության եւ ազգագրության ինստիտուտների, Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի եւ այլ հաստատությունների գիտական խորհուրդների անդամ եւ գործուն մասնակցություն է ունեցել դրանց աշխատանքներին: Վ. Բարխուդարյանը առանձնակի ջերմությամբ ու եռանդով է մասնակցել Հայոց եկեղեցու հոգևոր ու գիտամշակութային կյանքին: Նա երկար տարիներ եղել է Բարձրագույն հոգևոր խորհրդի անդամ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատան կայացմանը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանն ավելի քան չորս տասնամյակ՝ որպես Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, փոխնախագահ, հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար,

ծավալել է գիտական կազմակերպական ակտիվ գործունեություն: Որպես վաս-տակի գնահատում նա արժանացել է բազմաթիվ պարգևների՝ ԽՍՀՄ Պատվո նշան, ՀՀ Մուրթ Մերոպ Մաշտոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Սահակ Ս. Մերոպ շքանշաններ, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ոսկե մեդալ:

## Վրաստանի պաշտպանության նախարարությունը հերքել է ՌԳ-ից Հայաստան ռազմական տեխնիկայի տարանցումը

23.03.2017



Տեղեկությունն այն մասին, որ Ռուսաստանից Հայաստան Վրաստանի տարածքով ռազմական տեխնիկա է տեղափոխվել, չի համապատասխանում իրականությանը: Այս մասին ասվում է Վրաստանի պաշտպանության նախարարության հայտարարությունում, հաղորդում է «Sputnik-Грузия»-ն:

Չորեքշաբթի օրը Վրաստանի նախկին իշխող «Ազգային միասնական շարժում» կուսակցության առաջնորդներից Նուգզար Ցիկլաուրին հայտարարել է, որ Բոլնիսի շրջանում (Զվեմո Զարթիի շրջան) նկատել են ռուսական պետհամարանիշներով մի քանի բեռնատար ավտոմեքենաներ: Ցիկլաուրիի խոսքով՝ ամենայն հավանականությամբ, դա ԲՈՒԿ ինքնազնայ գննիթանիթոռայի համալիր է եղել: Բեռը Ռուսաստանից Հայաստան է ուղևորվելիս եղել:

«Տարածված տեղեկությունն այն մասին, որ այսօր ռուսական ռազմական տեխնիկան իբր թե Վրաստանով տարանցիկ նշանակությամբ, Հայաստան է ուղևորվել, չի համապատասխանում իրականությանը: Դա քաղաքացիական, ոչ թե ռազմական նշանակության տեխնիկա է: Պաշտպանության նախարարությունը ռազմական արտադրանքի տարանցման թույլտվություն տալիս է, սակայն այս դեպքում նման թույլտվություն չի տրվել», - ասվում է հայտարարությունում:

Ընդգծվել է նաև, որ արդեն երկար տարիներ ոչ ոք նախարարություն չի դիմել ռազմական տեխնիկայի տարանցման թույլտվության համար՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ռուսաստանից:

## Նախագահը հրամանագիր է ստորագրել Իրաքի Էրբիլ քաղաքում ՀՀ զլխավոր հյուպատոսություն ստեղծելու մասին

23.03.2017

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Իրաքի Էրբիլ քաղաքում ՀՀ զլխավոր հյուպատոսություն կստեղծվի: ՀՀ նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրում ասվում է.

«Հիմք ընդունելով «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը՝ որոշում եմ.



Իրաքի Հանրապետության Էրբիլ քաղաքում ստեղծել Հայաստանի Հանրապետության զլխավոր հյուպատոսություն՝ հյուպատոսական շրջանում ընդգրկելով Բուրդիստանի տարածաշրջանը (Էրբիլ, Սուլեյմանիա, Դոհուկ)»:

## Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Ռուբեն Սաֆրաստյանը

22.03.2017



ՀՀ ԳԱԱ նախագահությունը մարտի 22-ի նիստում ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանին: Այս մասին հայտնեցին Գիտությունների ազգային ակադեմիայից:

Ռուբեն Սաֆրաստյանի հետազոտությունների բնագավառն ընդգրկում է Թուրքիայի նոր եւ նորագույն պատմությունը, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, տարածաշրջանային խնդիրները, ցեղասպանագիտությունը: Նրա հիմնական գիտական արդյունքները վերաբերում են թուրքական գաղափարաքաղաքական հոսանքների ուսումնասիրմանը, ցեղասպանության տեսական հետազոտությանը:

Ռուբեն Սաֆրաստյանը ղեկավարում է Արևելագիտության ինստիտուտը 2006 թվականից:

## Քաղաքացիները «Հաց բերողին» սգո սրահից մինչև գերեզմանատուն ուղեկցեցին ծափահարություններով

22.03.2017

Երեւանում այսօր՝ մարտի 22-ին, տեղի ունեցավ Արթուր Սարգսյանի «Հաց բերողի» հուղարկավորությունը:

Արթուր Սարգսյանին վերջին հրաժեշտը տալու էին եկել բազմաթիվ քաղաքացիներ, հայտնի մշակույթի եւ քաղաքական գործիչներ: «Հաց բերողին» քաղաքացիները սգո սրահից մինչև Ծահույանի գերեզմանատուն ուղեկցեցին ծափահարություններով եւ «Արթուրը չի մահացել, Արթուրը գոհվել է», «Փառք Հաց բերողին»



վանկարկումներով: Ծափահարություններին միանում էին նաև անցորդները:



Շահումյանի գերեզմանատանը թաղման արարողակարգի ժամանակ դերասանուհի Թամարա Հովհաննիսյանը հայտարարեց, որ «Հաց բերողին» թաղում են հատուկ փորված բետոնապատ դամբարանատիպ փոսում, որպեսզի հետագայում հնարավորության դեպքում Արթուր Սարգսյանի մարմինը տեղափոխեն «Եռաբլուր» պանթեոն: Հիշեցնենք, որ «Սասնա ծռերին» օժանդակելու մեջ մեղադրվող Արթուր Սարգսյանը՝ «Հաց բերողը», մարտի 16-ին մահացել էր «Արմենիա» բժշկական կենտրոնում:



Արթուր Սարգսյանը 2016 թվականի ամռանը ռատիկանության Երևանի ՊՊԾ գնդի տարածքը գրավելու օրերին կրակահերթերի տակ ավտոմեքենայով ճեղքել էր ռատիկանական պատն ու սնունդ տարել «Սասնա ծռեր» զինված խմբին:

## Ադրբեջանին ոչինչ զիջել չի կարելի. Փորձագետ

10.03.2017



Ադրբեջանին որևէ զիջում չի կարելի անել: Այս մասին մարտի 10-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար, արտակարգ և լիազոր դեսպան Արման Նավասարդյանը:

Նրա կարծիքով՝ վերջերս Ֆրանսիա կատարած պաշտոնական այցի ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունը ներկա իրադրությունում շատ ճիշտ էր: Իսկ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հայտարարությունը Բաքվի համար «սառը ցնցուղ» դարձավ: Նման վարքագիծ պետք էր դրսևորել վաղուց, կարծում է նա: «Ինչու՞ մենք ժամանակին ստորագրեցինք Մադրիդյան սկզբունքների ներքո: Գոնե այժմ պետք է ուղղել այդ սխալը, քանի որ Ադրբեջանին ոչինչ տալ չի կարելի», - ընդգծել է Նավասարդյանը:

Հիշեցնենք, որ «Ֆրանս Փրես» պետական գործակալության հետ հարցազրույցում Սերժ Սարգսյանը հայտարարել է. «Հայաստանում գերիշխող է կարծիքը, որ ռազմական գործողությունների վերակսումը ժամանակի հարց է և որ Գերագույն հրամանատարն ու պաշտպանության նախարարը պետք է պատրաստ լինեն պատերազմի սկսվելուն թեկուզ վաղը: Չեմ կարծում, որ նոր պատերազմն անմիջական վտանգ է, բայց պետք է պատրաստ լինել ամեն ինչի, երբ գործ ունես անկանխատեսելի հարեւանի հետ»:

## Կյանքից հեռացել է ժողովրդական նկարիչ Անատոլի Գրիգորյանը

15:50, 18.03.2017



ՀՀ մշակույթի նախարարությունը խոր վշտով տեղեկացնում է, որ մարտի 17-ին, 75 տարեկան հասակում կյանքից հեռացել է գեղանկարիչ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Անատոլի Հակոբի Գրիգորյանը: Անատոլի Գրիգորյանի մահվան կապակցությամբ ստեղծվել է թաղման կառավարական հանձնաժողով:

## Հայաստանը ԱՄԷ-ի քաղաքացիների համար առանց վիզայի ռեժիմ է սահմանել

16.03.2017



Հայաստանն առանց վիզայի ռեժիմ է սահմանել Արաբական Միացյալ Էմիրությունների քաղաքացիների համար: Մարտի

16-ին այս մասին որոշումն ընդունվեց կառավարության նիստի ժամանակ:

Որոշման հիմնավորման մեջ նշված է, որ ավելի հեշտ է միակողմանի կարգով վիզային ռեժիմը հիմա չեղարկել, քան սպասել մինչև Էմիրությունները նույն ռեժիմը կսահմանեն Հայաստանի քաղաքացիների համար: Նույնիսկ միակողմանի չեղարկումը անչափ շահավետ կլինի զբոսաշրջիկներին, գյուղատնտեսության, անշարժ գույքի, առողջապահության ոլորտներում հնարավոր ներդրողներին ներգրավելու տեսակետից: Առանց վիզայի ռեժիմը սահմանվել է ստանդարտ պայմաններով (տարվա ընթացքում մինչև 180 օր):

## Ալեքսեյ Միլեր. Ռուսաստանն ուզում է Հայաստանի օգնությամբ Իրան էլեկտրաէներգիա մատակարարել

15.03.2017



Ռուսաստանը մտադիր է Հայաստանի օգնությամբ փոխանակման գործարքներով հարթել դեպի Իրան էլեկտրաէներգիայի մատակարարումները: Այս մասին հայտնել է Գազպրոմի ղեկավար Ալեքսեյ Միլերը, փոխանցում է Gazeta-ն:

«Հայաստանը ծրագրում է հաջորդ տարի կառուցել բարձրվոլտային էլեկտրամատակարարման գիծ, ինչը Ռուսաստանին թույլ կտա փոխանակման գործարքներով էլեկտրաէներգիա արտահանել իրանական շուկա», - ասել է Միլերը:

Նա նաև շեշտել է, որ այս պահին ավարտվել է Հրազդանի ՋԷԿ-ի հինգերորդ բլոկի արդիականացումը:

## Կոմկուս. Հայաստանին անհրաժեշտ է զարգացնել ռազմական արդյունաբերությունը

14.03.2017



Հայաստանին անհրաժեշտ է զարգացնել ռազմական արդյունաբերությունը: Այս մասին մարտի 14-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է Կոմունիստական կուսակցությունից պատգամավորի թեկնածու Իրինա Հովակիմյանը:

Նրա խոսքով՝ կոմունիստական գաղափարաբանությունը քարոզել ու քարոզում է մարդասիրական գաղափարներ: Դրանք են՝ սեր, հարգանք, օգնություն, հասարական սեփականության հավասարապես օգտագործում:

«Մենք, իհարկե, ունեինք տնտեսության զարգացման հիանալի մեթոդներ: Մենք բոլորս գիտենք, որ տնտեսության հիմնական օղակն արդյունաբերությունն է, ես կարող եմ առանձնացնել ռազմական արդյունաբերությունը: Հաշվի առնելով մեր հարեւանների տրամադրվածությունը՝ մենք պետք է զարգացնենք ռազմական արդյունաբերությունը», - ընդգծել է Հովակիմյանը:

## Մանկավարժ. Հայաստանում այսօր կոմունիստական գաղափարախոսության մեծ պահանջարկ կա

13.03.2017



Ներկայումս Հայաստանում կոմունիստական գաղափարախոսության մեծ պահանջարկ կա: Այս մասին մարտի 13-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանի Կոմունիստական կուսակցությունից պատգամավորի թեկնածու, մանկավարժ Արմինե Դավթյանը:

Նրա խոսքով՝ սա պայմանավորված է այն հանգամանքով, որ կոմունիստական գաղափարախոսությունը պարունակում է մարդկության ապագայի տեսլականի նկարագրություն, երբ բոլոր մարդիկ հավասար հնարավորություններ կունենան: «Այսօր մենք կործանում ենք մեր կրթական համակարգը: Կրթությունը, որպես պետության ռազմավարական ինստիտուտ, պետք է զարգացնի արտադրությունը եւ տնտեսությունը: Մեր ընդդիմախոսներն այսօր գաղափարախոսական հիմքեր չունեն, մենք այսօր չգիտենք՝ որն է Հանրապետական կուսակցության կամ «Բարգավաճ Հայաստանի» գաղափարախոսական հիմքը: Մեզ այսօր պակասում են կոմունիստական արժեքները», - ընդգծեց Դավթյանը:

## Կոմկուս. Հայաստանի իրավիճակում գունավոր հեղափոխությունների մասին մտածելն անգամ վտանգավոր է

11.03.2017

Հայաստանն այնպիսի դրության մեջ է, որ գունավոր հեղափոխությունների մասին մտածելն անգամ վտանգավոր է, գրույցում այս մասին հայտարարեց Հայաստանի Կոմունիստական կուսակցությունից պատգամավորության թեկնածու, ԽՍՀՄ վաստակավոր օդաչու Դմիտրի Ադբաշյանը:

Հարցին, արդյո՞ք Հայաստանում գունավոր հեղափոխությունների վտանգ տեսնում է, նա պատասխանեց. «Ես չեմ հավատում, որ Հայաստանում կան ուժեր, որոնք կարող են որեւէ հեղափոխություն իրականացնել: Եթե նրանք ինչ-որ տեղ կան, ապա դրանք մարդիկ են, որոնք դավաճանել են մեր ազգին, քանի որ Հայաստանն այնպիսի իրավիճակում է, որ հիմա որեւէ հեղափոխության մասին մտածելն անգամ վտանգավոր է»:

Հիշեցնենք, որ Հայաստանի Միացյալ առաջադիմական կոմունիստական կուսակցության նախագահ Վազգեն Մաֆարյանը, ներկայացնելով Կոմկուսի նախընտրական ծրագիրը, հայտարարել էր. «Անհրաժեշտ է Հայաստանի ներքում պայքարել կասկածելի ծագման ուժերի ակտիվացման դեմ, որոնք գունավոր հեղափոխություններ են ծրագրում, քանի որ այդ ուժերը չեն կարող ծառայել մեր ժողովրդի ազգային շահերին»:

## Միայն ուժեղ տնտեսությամբ պետությունը կարող է արտաքին քաղաքականության մեջ պայմաններ թելադրել . Վազգեն Մաֆարյան

06.03.2017



Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Այս մասին նախընտրական բանավեճերի ժամանակ մարտի 6-ին ասել է Հայաստանի Միացյալ առաջադիմական կոմունիստական կուսակցության նախագահ Վազգեն Մաֆարյանը, որը 2-րդ հորիզոնականն է զբաղեցնում Հայաստանի Կոմկուսի համամասնական ցուցակի համապետական մասում:

Նրա խոսքով, ազգերի ինքնորոշման իրավունքը միշտ բարձր է եղել տարածքային ամբողջականության սկզբունքից: «Հակառակ դեպքում Աֆրիկայում 50-ից ավելի պետություն չէր լինի», - նկատել է նա: Նա ասել է, որ աշխարհին պետք է հիշեցնել ինքնորոշման սկզբունքի գերակայությունը ու Հայաստանի Կոմկուսը մտադիր է օգտագործել իր հին ու նոր կապերը՝ դրան հասնելու համար: Մաֆարյանը նաեւ նկատել է, որ անհրաժեշտ է զարգացնել երկրի տնտեսությունը: «Միայն ուժեղ տնտեսությամբ պետությունը կարող է արտաքին քաղաքականության մեջ պայմաններ թելադրել», - ամփոփել է նա:

## Ժամանակն է, որ ռազմավարական նշանակության օբյեկտները պետության սեփականությունը դառնան. Հայաստանի կոմկուս

06.03.2017

Ժամանակն է, որ ռազմավարական նշանակության օբյեկտները պետության սեփականությունը դառնան: Այս մասին այսօր՝ մարտի 6-ին, հայտարարել է ՀՀ կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Տաճատ Սարգսյանը:

«Մենք պետք է զարգացնենք ռազմական արդյունաբերությունը», - ընդգծել է Տաճատ Սարգսյանը: Նա հավելել է, որ անհրաժեշտ ներդրումների միջոցով պետք է զարգանա նաեւ գիտությունը:

## 94 տարեկանում կյանքից հեռացել է հայտնի օդաչու-փորձարկող Ստեփան Միկոյանը

24.03.17



Իննսուներսու տարեկանում (95-ամյակը կլրանար հուլիսին) մահացել է խորհրդային պետական գործիչ Անաստաս Միկոյանի որդին՝ հայտնի օդաչու-փորձարկող Ստեփան Միկոյանը: Այդ մասին հայտնում է [Russia Today](#)-ը՝ վկայակոչելով «ՄիԳ» ռուսական ինքնաթիռաշինարարական կորպորացիայի մամուլի ծառայությանը:

«2016 թվականի մարտի 24-ին 94 տարեկանում կյանքից հեռացել է Խորհրդային Միության հերոս, ԽՍՀՄ պատվավոր օդաչու-փորձարկող, ավիացիայի գեներալ-լեյտենանտ Ստեփան Անաստասի Միկոյանը, որը մեծ ներդրում է ունեցել հայրենական ավիացիայի զարգացման գործում», - ասված է հաղորդագրությունում:

Կորպորացիայում ընդգծել են, որ Ստեփան Միկոյանի մահը կորուստ է ամբողջ հայրենական ավիացիայի համար:

«Նա երկար և արժանի կյանք է ապրել: Նրա անունը միշտ կմնա ավիացիայի պատմության և մեր հիշողության մեջ», - հավելել են մամուլի ծառայությունում:

1941 թվականին Միկոյանն ավարտել է Կաչինսկի Ա. Մյասնիկյանի անվան օդաչուների ռազմական ավիացիոն դպրոցը, իսկ նույն տարվա դեկտեմբերին մեկնել է ճակատ: Որպես օդաչու մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Անցած տարվա նոյեմբերին մահացել է Ստեփան Միկոյանի եղբայրը՝ խորհրդային ավիակոնստրուկտոր և ՄիԳ-29 կործանիչի ստեղծողներից Հովհաննես Միկոյանը:

## 2017-ին ԵՄ-ն Հայաստանին 40-45 մլն եվրո կհատկացնի

07.04.2017



2017-ին Եվրամիությունը Հայաստանին կհատկացնի 40-45 մլն եվրոյի չափով դրամաշնորհներ: Այս մասին ապրիլի 7-ին լրագրողներին հայտնել է Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Խոսե Բին Աճեմյանը:

ԵՄ-ն տարեկան 40-45 մլն եվրո է հատկացնում Հայաստանին, որի կեսը, որպես կանոն, բյուջետային աջակցության համար, իսկ մյուս կեսը՝ նպատակային ծրագրերի: Վերջին 10 տարիներին աջակցության ծավալը կազմել է մոտ 500 մլն եվրո, հավելել է նա:

«Ընդ որում , ի տարբերություն այլ դոնորների, եթե նրանց այդպես անվանենք, մենք ոչ թե վարկ ենք տալիս, այլ դրամաշնորհ: Մենք այդ գումարը հետ չենք պահանջում: Մեր նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը», - հայտնել է Աճեմյանը:

## Ովքե՛ր են լինելու ազգային փոքրամասնությունների պատգամավորները եւ որ ուժերն են ներկայացնելու

06.04.2017



Հայաստանի ամենամեծ 4 ազգային փոքրամասնություններից երեքի (քրդեր, ասորիներ, եզդիներն) ներկայացուցիչները խորհրդարան կանցնեն ՀՀԿ ցուցակով: Այս մասին նշել է ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Թադևոսյանը:

Եւս մեկ ազգային փոքրամասնության (ռուսներ) ներկայացուցիչ ԱԺ կանցնի «Ծառուկյան» դաշինքի ցուցակով:

Ըստ այդմ, խորհրդարան են անցնում ՀՀԿ համապետական ցուցակի երկրորդ մասում ընդգրկված հետևյալ ներկայացուցիչները. Ռուստամ Մախմուդյան (եզդի), Կնյազ Հասանով (քուրդ) եւ Արսեն Միխայլով (ասորի):

Նշենք, որ Ռուստամ Մախմուդյանը ԵՊՀ դոցենտ է, Արսեն Միխայլովը՝ «Աթուր» ասորական սոցիալ-հասարակական նախագահ, Արզնի համայնքի ղեկավարի տեղակալ:

«Ծառուկյան» դաշինքից խորհրդարան է անցնում Տատյանա Միքայելյանը (ռուս): Նա աշխատում է «Ինտելեքուալ» Գյումրիի մասնաճյուղում:

Նշենք, որ Սահմանադրության 89-րդ հոդվածի 2-րդ կետի եւ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակի 2-րդ մասում ընդգրկվում են ընտրությունների նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնության ներկայացուցիչները:

Դոնթի բանաձեւերով որոշվում է, թե 4 ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրը որ քաղաքական ուժի կողմից է առաջադրվում:

Ըստ այդ բանաձեւի ազգային փոքրամասնությունների տեղերը բաշխվում են հետևյալ հերթականությամբ. 1-ին՝ ՀՀԿ, 2-րդ՝ «Ծառուկյան» դաշինք, 3-րդ եւ 4-րդ՝ կրկին ՀՀԿ: Քանի որ մեծությամբ երկրորդ ազգային փոքրամասնությունը ռուսներն են, նրանց ներկայացուցիչը ներկայացվում է «Ծառուկյան» դաշինքի կողմից:

## Հայաստան. փոքրիկ եվրոպական երկիր՝ հարուստ հոգեւոր պատմությամբ. BBC (Փոտո)

06.04.2017



Բրիտանական BBC-ի կայքը ճամփորդությունների մասին բաժնում Հայաստանի մասին հողված եւ վառ լուսանկարների շարք է հրատարակել՝ «Եվրոպական երկիր, որը քրիստոնեությունը որպես պետական կրոն է ընդունել 301 թվականին» վերնագրով:

Հողվածում նշվում է, որ Հայաստանն աշխարհի ամենափոքր երկրներից է, բայց հարուստ հոգեւոր պատմություն ունի, որը տեսանելի է մինչ օրս:

Հրատարակման մեջ նշվում է Գրիգոր Լուսավորչի կյանքի մասին, որը քրիստոնեությունը Հայաստան է բերել: Հողվածը մանրամասն պատմում է նաեւ Գառնու տաճարի, Էջմիածնի, Գեղարդի վանական համալիրի, խաչքարերի, Քարահունջի եւ Եղեռնի գյուղի եկեղեցու մասին:

## Կոմկուս. Պաշտոնապես հայտարարված քվեարկության արդյունքները հեռու են իրականությունից

10:43, 05.04.2017



Հայաստանի Կոմկուսի՝ պաշտոնապես հայտարարված արդյունքները հեռու են իրականությունից, այս մասին հայտարարեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Տանատ Սարգսյանը:

«Իհարկե՝ մինչ ընտրությունների օրը բոլորի մոտ կարծիք կար, որ Կոմունիստական կուսակցությունն անապաման տեղ է ունենալու խորհրդարանում, քանի որ այդ մասին էր վկայում նախընտրական շրջանում մեր հանդիպումների ժամանակ ժողովրդի տրամադրվածությունը: Մակայն հրատարակված թվերը, որ ստացել է Հայաստանին Կոմկուսը, անհավանական են՝ ընդամենը 0.75%: Դա շատ հեռու է իրականությունից: Իհարկե՝ մենք գիտենք, որ ընտրություններն արդար չեն եղել: Ժողովուրդը, ելնելով, սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունից, հարկադրված է եղել վերցնել նետված մի քանի կոպեկը», - հայտարարեց Սարգսյանը:


Դիտարկմանը, որ քվեարկությունից առաջ Կոմկուսը գոհ էր քարոզարշավից եւ լրատվամիջոցներում նախընտրական հանդիպումների լուսաբանումից ու հույս էր հայտնում, որ հաղթահարելու է 5%-ի շեմը՝ ոչինչ չնշելով ընտրությունների

անարդար բնույթի մասին, ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղարը պատասխանեց. «Մինչև ընտրությունների օրն ամեն ինչ նորմալ էր. եւ լրատվամիջոցներն էին օբյեկտիվ, եւ իշխանությունները որեւէ ճնշում չէին գործադրում: Մենք չէինք էլ կասկածում, որ նման քան կարող է տեղի ունենալ»:

Հիշեցնենք, որ Հայաստանի Կոմունիստական կուսակցությունն ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններում ընդամենը 11.742 ձայն է հավաքել կամ 0.75%, ինչը, 2012 թվականի մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների համեմատ, ավելի քան 4.000 ձայնով պակաս է:

## Կոնգրես-ՀԺԿ դաշինքը բողոքարկի ընտրությունների արդյունքների օրինականությունը

07.04.2017



Կոնգրես-ՀԺԿ դաշինքը այսօր, խորհրդարանական ընտրություններից հետո առաջին անգամ հանդես է եկել հայտարարությամբ եւ նշել, որ բողոքարկելու է խորհրդարանական ընտրությունների արդյունքների օրինականությունը:

«2017 թվականի ապրիլի 2-ի Ազգային Ժողովի ընտրություններն անցան իշխանության կողմից կազմակերպված զանգվածային և համակարգված օրինախախտումների կիրառությամբ: Այդ օրինախախտումները ներառում են.

- Սահմանադրության խախտմամբ ընտրությունների օրվա նշանակումը:
- Ընտրակաշառքի զանգվածային բաժանումը, քաղաքացիների անձնագրերի եւ նույնականացման քարտերի ապօրինի հավաքումը, իրավապահ մարմինների անգործությունը:
- Ընտրողների ահաբեկումը, վարչական լծակներով եւ կրիմինալի ներգրավմամբ ճնշումների լայնածավալ կիրառումը: Ոստիկանության օժանդակությամբ ընտրողներին պարտադրված զանգվածային վերագրանցումների կատարումը: Տեղամասային կենտրոններում օրենքի խախտմամբ կուտակումները եւ անկառավարելի վիճակի ստեղծումը, այդ կապակցությամբ ոստիկանության անգործությունը:
- Քվեարկության գաղտնիության համատարած խախտումը, ներառյալ վերահսկված ու բաց քվեարկությունը, այդ թվում գունավոր գրիչների, գունավոր եւ համարակալած թղթիկների կիրառման միջոցով: Ընտրողների բացահայտ ապօրինի ուղղորդումը, ինքնուրույն քվեարկելու խնդիրներ ունեցող ընտրողներին օգնելու դրույթի չարաշահումը:
- Քվեարկության ընթացքի նկատմամբ հասարակական վերահսկողությունը խոչնդոտելու նպատակով, տեղամասերում տեղադրված տեսախցիկների միջոցով ինտերնետային հեռարձակման դադարեցումը՝

քվեարկության օրվա 7.00-ից 13.00-ը ընկած ժամանակահատվածում, ինչը համընկավ ընտրողների ակնհայտորեն կազմակերպված գերակտիվ հոսքի հետ:

- Կրկնակի քվեարկության բազմաթիվ արձանագրված դեպքերը:
  - Բռնության և ահաբեկման դեպքերը լրագրողների, վստահված անձանց և դիտորդների նկատմամբ: Այսպիսով, հաշվի առնելով, որ հերթական անգամ կոպտորեն ոտնահարվել է ժողովրդավարությունը և ընտրական գործընթացի լայնածավալ եւ կազմակերպված խախտումները բացառել են ժողովրդի ազատ կամարտահայտությունը, Նպատակ ունենալով հանարավորություն տալ քաղաքական ուժերին և քաղաքացիական հասարակությանը իրավական գնահատական տալու խախտումների մասին արձանագրված փաստերին,
- Կոնգրես-ՀԺԿ դաշինքը որոշել է բողոքարկել ընտրությունների արդյունքների օրինականությունը և լիազորել ապրիլի 2-ի ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացրած «Քաղաքացի դիտորդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Տիգրան Եգորյանին ներկայացնելու Կոնգրես-ՀԺԿ դաշինքի բողոքը ԿԸՀ և Սահմանադրական դատարան՝ 2017թ.ապրիլի 2-ի ընտրությունները անվավեր ճանաչելու պահանջով»,- ասված է հայտարարությունում:

Նշենք, որ ԿԸՀ-ն հրապարակել է ԱԺ ընտրությունների նախնական արդյունքները, ըստ որոնց՝ արդյունքները բաշխվել են հետևյալ կերպ. Հանրապետական կուսակցություն- 49,12 տոկոս, «Ծառուկյան» դաշինք՝ 27,32 տոկոս, «Ելք» դաշինք՝ 7,77 տոկոս, ՀՅԴ՝ 6,57 տոկոս: Ըստ այդմ, ՀՀԿ-ն կստանա 58 մանդատ, «Ծառուկյան դաշինքը՝ 31 մանդատ, «Ելք» դաշինքը՝ 9 մանդատ եւ ՀՅԴ-ն՝ 7 մանդատ: Ընտրություններին մասնակցած մնացած 5 ուժերը («Ազատ դեմոկրատներ, «Հայկական վերածնունդ», ՕՐՕ դաշինք, «Կոնգրես-ՀԺԿ» դաշինք եւ Կոմկուս) չեն հաղթահարել ԱԺ-ում հայտնվելու նվազագույն շեմը: ԿԸՀ նախնական տվյալներով, ընտրություններին մասնակցել է քվեարկելու իրավունք ունեցող 2 մլն 588 հազար 590 քաղաքացիներից 1 մլն 577 հազար 323-ը:

## Հատուկ քննության կարիք ունի ընտրողների անսպասելի բարձր մասնակցությունը. ՀՅԴ հայտարարությունը

05.04.2017

Ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունները խորհրդարանական և ընտրական համակարգերի առաջին փորձությունն էին՝ քաղաքական նոր մշակույթ ձևավորելու, նոր սկիզբ դնելու առաջադրանքով:

Այս մասին ասվում է ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հայտարարության մեջ:

Հայտարարությունում նաեւ ասվում է.

«Մեկնելով նախընտրական շրջանի, ընտրության օրվա և արդյունքների վերլուծությունից՝ Հ. Յ. Դաշնակցության Հայաստանի Գերագույն մարմինը արձանագրում է.

- ա. Քաղաքական համակարգի կայացման առումով գնահատելի էր դերակատար ուժերի ազատ մրցակցությունը և հիմնականում քաղաքակիրթ ընտրապայքարը:
- բ. Հատուկ քննության կարիք ունի ընտրողների անսպասելի բարձր մասնակցությունը, ինչը մի կողմից քաղաքացիական

ակտիվության գնահատելի դրսևորում էր, մյուս կողմից՝ ֆինանսական ու վարչական ռեսուրսի օգտագործման արատավոր երևույթի հետևանք:

գ. Փաստ է, որ սոցիալական դժվար կացության մեջ հայտնված հասարակության զգալի մասը, որը չունի անհրաժեշտ քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, դեռևս ի վիճակի չէ ազատ ու գիտակցված ընտրություն կատարել: Հանրության քաղաքական, հոգևոր-մշակութային արժեհամակարգի արմատական փոփոխությունը կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, ազգային-պետական ընտրախավի լրջագույն մարտահրավերն է:

դ. Տեղի է ունեցել քաղաքական դաշտի որոշակի բյուրեղացում. բացահայտ ամբոխավարական և պարտավորական գաղափարները չընդունվեցին մեր հանրության կողմից:

ե. Գնահատելի է, որ իրենց մասնագիտական պարտականությունները և քաղաքացիական պարտքը կատարեցին լրատվամիջոցներն ու իրապես անկախ դիտորդական կազմակերպությունները:

զ. Նոր Ազգային ժողովում Հ.Յ. Դաշնակցության դերակատարության ձևաչափը թողնելով առաջիկա օրերի քննարկումներին՝ մենք շնորհակալություն ենք հայտնում գիտակից քվեարկություն կատարած յուրաքանչյուր քաղաքացու, ինչպես նաև մեր շուրջ համախմբված ընտրապայքարի բոլոր մասնակիցներին:

է. Այս ընտրություններում Հ.Յ. Դաշնակցության արձանագրած նկատելի առաջընթացը պարտավորեցնող է: Մենք շարունակելու ենք հետևողականորեն իրագործել մեր գաղափարներն ու ծրագրերը՝ հավատարիմ ՀՀ քաղաքացիներին տրված՝ նոր սկիզբ դնելու, ազատ, արդար, խաղաղ, բարեկեցիկ Հայաստան ունենալու խոստմանը»:

## ՕԲՕ դաշինքը պահանջում է վերլուծել մատնահետքերը

04.04.2017

«Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» դաշինքը դիմել է ԿԸՀ՝ պահանջելով ԵԱՀԿ դիտորդական առաքելության եւ իր մասնագետների անմիջական մասնակցությամբ ընտրական տեղամասերում հատուկ սարքերով ձեռք բերված մատնահետքերը միավորել մեկ ընդհանուր բազայում եւ անցկացնել համեմատական վերլուծություն՝ պարզելու համար, թե արդյոք կան մատնահետքերի համընկնում, թե՛ ոչ:

ԿԸՀ նախագահ Տիգրան Մուկույանին հասցեագրված դիմումում, մասնավորապես ասվում է. «2017թ. ապրիլի 2-ի ԱԺ ընտրությունների ընտրողների մասնակցության թիվը՝ 1 մլն 574 հազար 947, լուրջ կասկած է առաջացրել հանրության շրջանում: Մտացվել են բազմաթիվ ահազանգեր առ այն, որ տեղի են ունեցել են հին, հնամաշ, վերակազմված եւ ժամկետով երկարացված անձնագրերով կրկնաքվեարկություններ: Մեր ունեցած տեղեկություններով, կրկնաքվեարկությունը տեղի է ունեցել նույն անձի տարբեր անձնագրերով տարբեր տեղամասերում քվեարկելու ճանապարհով, քանի որ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը չի սպասիովել Հայաստանի ամբողջ տարածքում մատնահետքերի միասնական ստուգման հնարավորությունը մեկ ցանցով, թեև փաստացի շուրջ 1500 տեղամասերում ունեցել է ցանց, որի կիրառմամբ

կատարվել է նաև առցանց տեսահեռարձակում: Այսպիսով, ԿԸՀ-ն թույլ է տվել նման կրկնաքվեարկության հնարավորություն՝ չձեւավորելով մատնահետքերը նույնականացնող սարքերից ստացվող տեղեկատվության միասնական բազա ամբողջ հանրապետության տարածքում:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ պահանջում ենք ԿԸՀ-ից ԵԱՀԿ դիտորդական առաքելության եւ մեր մասնագետների անմիջական մասնակցությամբ ընտրական տեղամասերում հատուկ սարքերով ձեռք բերված մատնահետքերը միավորել մեկ ընդհանուր բազայում եւ անցկացնել համեմատական վերլուծություն՝ պարզելու համար, թե արդյոք կան մատնահետքերի համընկնում, թե՛ ոչ: Նման համընկնումների ծավալները ճշտելուց հետո հնարավոր կլինի կամ հաստատել կամ հերքել կեղծ անձնագրերով զանգվածայնորեն կրկնաքվեարկության իրականացման կասկածները»:

## «Ժողովուրդ» Ո՞ւմ ցուցմունքով է կալանավորել Սամվել Բաբայանը, նոր մանրամասներ

05.04.2017



«Ժողովուրդ» թերթը գրում է. «Լ.Ղ ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանի գործը փակուղի է մտել: Մարտի 24-ից նախաքննություն իրականացնող մարմինը որեւէ քննչական գործողություն չի իրականացնում: Ավելին՝ մինչ օրս գործով ընդամենը մեկ անձ է ցուցմունք տվել կալանավորված անձանց դեմ, մյուսները որեւէ ցուցմունք չեն տվել: Նրանց դեմ ցուցմունք տվող անձի ինքնությունը ԱԱԾ-ն դեռ գաղտնի է պահում:

Ինչ վերաբերում է այս գործով գաղտնալուծմանը, որոնք ըստ էության հիմք են դարձել, որպեսզի իրավապահները կալանավորեն վերոնշյալ անձանց, ապա այնտեղ էլ կոնկրետ փաստեր չկան: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ այդ ձայնագրությունների մեջ ընդհանրապես զենքի մասին խոսք չի եղել: Սակայն քննիչներն ասել են, թե իրենք ենթադրում են, որ ինչ խոսել են՝ հենց հրթիռի մասին է»:

## Փորձագետ. Ղարաբաղյան խնդիրը բանակցային ճանապարհով լուծում չունի

05.04.2017

Ղարաբաղյան խնդիրը բանակցային ճանապարհով լուծում չունի: Ապրիլի 5-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին ասաց «Մոդուս Վիվենդի» վերլուծական կենտրոնի ղեկավար, փորձագետ Արա Պասյանը:

Նրա խոսքով՝ սա անհրաժեշտ է ընդունել: «Եկեք այլընտրանք մտածենք, թե այս հարցին ինչպես

վերաբերվենք: Այլեւն ազնիվ տղա է: Նա մշտապես ազնիվ է խոսում. «Ես խնդիրը հետեւյալ կերպ կլուծեմ՝ ձեր բնաջնջմամբ: Ոչ թե Ղարաբաղի, այլ Հայաստանի բնաջնջմամբ»,- ընդգծեց Պապյանը:



Ըստ փորձագետի՝ Ադրբեջանը խոցելի տեղեր չառ ունի: «Ի տարբերություն մեզ, ադրբեջանական հասարակությունը ներքուստ բաժանված է կրոնական եւ էթնիկական խմբերի: Եկեք նրանց հետ աշխատենք, այսինքն՝ ադրբեջանական կողմին ոչ համաչափ պատասխան տանք»,- նշեց Արա Պապյանը:

## Փորձագետ. Ադրբեջանը կիրառում է հայկական պետությունների հյուժման մարտավարություն

05.04.2017

Ադրբեջանի ղեկավարությունը կիրառում է հայկական պետությունների հյուժման մարտավարություն: Ապրիլի 5-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ այս մասին ասաց «Մոդուս Վիվենդի» վերլուծական կենտրոնի ղեկավար, փորձագետ Արա Պապյանը:

Նրա խոսքով՝ չի փոխվել Ադրբեջանի ո՛չ հռետորաբանությունը, ո՛չ գործողությունները: «Նրանց խնդրին ամենեւին Ղարաբաղը չէ, նրանց խնդիրն այս տարածաշրջանում հայկական գործոնի ոչնչացումն է: Իսկ ղարաբաղյան խնդիրը ընդամենը առիթ է»,- նշեց Պապյանը: Հանդիպման մյուս մասնակից հոգեբան Կարինե Նալչաջյանն, իր հերթին, անդրադառնալով անցյալ տարվա ապրիլյան իրադարձություններին՝ հայտարարեց. «Իհարկե, ադրբեջանական կողմի նպատակն ավելի երկարաժամկետ էր: Բայց անցյալ տարվա ապրիլը մեզ վրա սթափեցնող ազդեցություն ունեցավ»:

## Խաբեքայություն են Ադրբեջանի հավաստիացումները, թե տարածքները զիջեք, հետո քննարկենք. Վաղարշակ Հարությունյան

01.04.2017



Ադրբեջանը որեւէ զիջման չի ուզում գնալ, եւ խաբեքայություն են այն հավաստիացումները, թե զիջեք հետո քննարկենք: Այս մասին այսօր՝ ապրիլի 1-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է ՀՀ

պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանը:

Պաշտպանության նախկին նախարարի խոսքով՝ Լեռնային Ղարաբաղ հիմնախնդրի լուծում մոտակա ժամանակներում չի լինելու:

«Չկա մի նախապայման, որ Արցախի հարցը լուծվի, մենք կարգավիճակի դեմ պատրաստ ենք զիջել տարածքները, իսկ ի՞նչ է ասում Ադրբեջանը, ասում է՝ ոչ: Ադրբեջանը որեւէ զիջման չի ուզում գնալ, եւ խաբեքայություն են այն հավաստիացումները, թե զիջեք հետո քննարկենք: Այնպես որ, այսօր ստատուս քվոն պահվում է Ադրբեջանի մեղքով եւ որեւէ նախապայման ու վիճակ չկա, որ ասենք՝ Ադրբեջանը ուզում է հարցի լուծումը փոխզիջումներով»,- ասել է Վաղարշակ Հարությունյանը:

Ըստ նրա՝ կա մի քանի լուծման տարբերակ. երբ մի կողմը հասնում է հաղթանակի, երկրորդ տարբերակ, երբ կողմերը գալիս են համաձայնության եւ երրորդ, երբ ուժային տարբերակով միջազգային հանրությունը ստիպում է երկու կողմերին այնպես, ինչպես իրենք տեսնում են լուծումը, ինչպես Հարավսլավիայում էր:

Հարությունյանի խոսքով՝ Արցախի պարագայում այդ տարբերակը չի գործում, քանի որ որեւէ պետություն ի վիճակի չէ ստիպել մի կողմին գնալ այս տարբերակի լուծման եղանակով:

«Հիմա հայկական կողմի անելիքը որն է, ինչ արել ենք 91թ-ից, պետք է շարունակել, ստեղծելով հզոր քանակ, կարողանալ նաեւ արտաքին քաղաքականության միջոցով կոմպենսացնել: Մեր զինվորներն ավելի պատրաստված են եւ սա է հիմնական երաշխիքը, որ չլինի լայնածավալ պատերազմ»,-ասաց նա:

Վաղարշակ Հարությունյանի խոսքով՝ հայ ժողովրդի եւ սփյուռքի խնդիրն է իմանալ, որ սա այն հարցն է, որ լուծում չունի:

## Արցախի Թ-ալիշ գյուղի երեք բնակիչների սպանությունը ադրբեջանցի զինվորականների կողմից. անցել է մեկ տարի (ֆոտո)

01.04.2017

Հեղինակ՝ Մարիամ Լեւինա



Իտալիայի քաղաքների ընտանիքի տունը Թ-ալիշ գյուղի եզրին է գտնվում: Դրանից հետո միայն բլուրներ են: Հենց այդ հանգամանքն է դարձել այն արյունոտ ողբերգության պատճառներից մեկը, որը տեղի է ունեցել այստեղ մեկ տարի առաջ: 2016 թ ապրիլի 1-ի լույս 2-ի զիջերը ադրբեջանական ստորաբաժանումները լայնածավալ ագրեսիա են սկսել, ու մարդասպանների մի մասը հասել է Թ-ալիշ գյուղի ծայրամաս: Հանցագործների զոհերն են դարձել երեք տարեց մարդիկ, որոնք չէին հասցրել ժամանակին հեռանալ գյուղից: Նույնիսկ մեկ տարի անց սարսափելի է մտնել

Իտալափյանների ընտանիքի կրտսեր սերնդի կողմից լքված այս տունը:

Տան առջեւ, որը նայում է դեպի ադրբեջանական կողմից գնդակոծվող փողոց մի բզկտված սպիտակ բազմոց է դրված: Հավանաբար այստեղ ծերունիները հանգստանում էին ամառային երեկոներին : Մի քանի աստիճաններ տանում են դեպի տուն: Փոքր նախասրահ, որից հետո հյուրասենյակն է, որտեղ էլ հենց եղել են դաժանաբար սպանված Վալերա Իտալափյանն ու նրա կինը՝ Ռազմելան, նաև 92-ամյա Մարուսյա Իտալափյանը: Չարագործները կտրել էին ծերունիների ականջները: Այն ժամանակ, մեկ տարի առաջ, լրատվամիջոցներում տարածվեցին վարդագույն պատերով սենյակի, սպանված ծերունիների ու սպիտակ դռան վրա արյան ահասարսուռ լուսանկարները:

Տանը թնդացող դատարկություն է: Մենյակի կահույքից մնացել է միայն բազմոցը, որի վրա սպանվել էր Մարուսյա Իտալափյանը, երկու բազկաթռոնները, փայտյա նստարանը՝ ոտքերը դնելու համար: Վալերա Իտալափյանը նստած էր բազկաթռոններից մեկի վրա, երբ հանցագործները ներխուժել են սենյակ: Սպանված Ռազմելայի մարմինը գտել էին դռների մոտ:

Երբ սկսվել է գյուղի գնդակոծությունը՝ սպանվածների որդին՝ Գագիկ Իտալափյանը, վեց երեխաներին ու կնոջն անվտանգ վայր էր տեղափոխել: Բոլորի համար մեքենայում տեղը չէր բավականացրել: Վալերան ու Ռազմելան չէին կարողացել ոտքով տնից հեռանալ՝ տարեց Մարուսյայի պատճառով: Վերադառնալով ծնողների ու տատիկի ետևից՝ Գագիկ Իտալափյանը գյուղից ոչ հեռու լսել է ադրբեջաներեն խոսակցություն, որոշել էր մտնել գյուղապետի մոտ, որպեսզի նախագուշացնի, որ ադրբեջանցիներ գյուղ են մտել: Իսկ հետո չի կարողացել տուն վերադառնալ, այդ ընթացքում էլ ադրբեջանցի հանցագործները արել էին իրենց սև գործը:

**Արցախում զինձառայող է գոհվել**

31.03.2017



Մարտի 31-ին՝ ժամը 14:45-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմի խախտման հետևանքով, մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինձառայող, 1993թ. ծնված Գոռ Գեւորգի Հովհաննիսյանը Արցախի ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն: Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը եւ իր զորակցությունը հայտնում գոհված զինձառայողի ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին:

**Արևմտյան Հայաստան**

**Թուրքիայում կանգուն մնացած եկեղեցին ենթարկվում է գանձագողերի հարձակումներին**

25.03.2017



Թուրքիայի նախկին հայաբնակ Ուրֆա (Եդեսիա-խմբ) նահանգի Գերմուշ (Կամուրջ-խմբ) գյուղի հայկական եկեղեցին, որ 5 տարի առաջ հայտարարվել էր զբոսաշրջային կենտրոն, շարունակվում է ճակատագրի քմահաճույքին լքված մնալ:

Թուրքական Մրfanatik կայքի փոխանցմամբ՝ Ուրֆայի Գերմուշ գյուղում 19-րդ դարում 7 հայ եղբայրների կողմից կառուցված եկեղեցու որոշ հատվածներ սկսել են փլվել: Ուրֆայի հատվածում պատմական նշանակության հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվող Մեհմեդ Գյուզելը նշել է, թե եկեղեցին մինչև 1915-ը օգտագործել են ուղղափառ հայերը: «1915-ից հետո Գերմուշ գյուղը հանձնվել է համիդիյե ջոտակներից մեկի հրամանատար Մյումեր փաշային: Այս պահին գյուղը Մյումեր փաշայի ժառանգների ձեռքում է: Շոթ այս եկեղեցին վերանորոգվի, այն Ուրֆայի տուրիզմի համար մեծ օգուտ կբերի: Մենք ուզում ենք, որ այն վերանորոգվի ու կրկին բացվի հոգևոր արարողությունների համար»,-ասել է Մեհմեդ Գյուզելը: Գյուղի բնակիչներից Հուսեյն Ասլանն էլ նշել է, թե կանգուն մնացած եկեղեցին մշտապես ենթարկվում է գանձագողերի հարձակումներին ու փյուզման վտանգի տակ է:



**Թուրքիայում հող վարելու նպատակով պղծել են հայկական գերեզմանները (Ֆոտո)**

24.03.2017

Թուրքիայի նախկին հայաբնակ Երզնկա նահանգում տեղացիները հող վարելու նպատակով քանդել են հայկական գերեզմանները:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ալոս»-ը, քաղաքացիներից մեկը դաշտում նկատել է կոտրված



խաչքարեր ու մարդկային ոսկորներ, որից հետո շտապ ահազանգել է պատկան մարմիններին:


Ինդրի հետ կապված Երզնկայի մշակույթի վարչության պետը նշել է, թե արդեն ուսումնասիրություններ են իրականացնում ահազանգի հետքերով:

Իսկ տեղացիներն էլ պատմել են, որ այդ հատվածում հայերի գերեզման է եղել ու եկեղեցի, սակայն եկեղեցին ավերվել է, մնացել են միայն հիմքերը:

Իսկ հայկական գերեզմանի տարածքի հետ կապված պարզվել է, որ այն պետական հողատարածք է նշված, որը 49 տարով վարձակալության է հանձնվել գյուղատնտեսական նշանակությամբ օգտագործելու համար:

## Մարիամ Շահինյան. առաջին կին լուսանկարիչը Թուրքիայում

23.03.2017



Մարիամ Շահինյանը հայտնի լուսանկարիչ է եղել, որը համարվում է Թուրքիայում առաջին կին լուսանկարիչը: Նա ծնվել է 1911-ին թուրքական Միվաս քաղաքում, հայտնում է [Vintage Everyday](#)-ը:

1936-ին Մարիամը ստիպված էր կիսատ թողնել ուսումը ֆրանսիական «Մենթ Պուլիերի» դպրոցում, որպեսզի ֆոտոստուդիայում օգնի հորը: 1937-ին նա արդեն սկսել էր ինքնուրույն ղեկավարել ստուդիան: Մարիամը ղեկավարել է ֆոտոստուդիան մինչև 1985 թվականը:

Մարիամ Շահինյանը համարվում է առաջին կին լուսանկարիչը Թուրքիայում: Նա գլխավորապես զբաղվում էր տարբեր մարդկանց դիմանկարներով՝ սեռափոխներ, ապօրինի կրոնական ու էթնիկ խմբերի անդամներ, ունեւոր կանայք, իդենտիկ երկվորյակներ, նորածիններ ու երկարավարս գեղեցկուհիներ:

Ձեզ ենք ներկայացնում նրա զարմանալի աշխատանքներից մի քանիսը.

## Թավեթի հրահանգը Հալեպի նահանգապետարանին. տեղահանված հայերը պետք է մնան արքայազմերում

15.03.2017




Հայոց ցեղասպանության ժամանակ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թավեթ փաշայի՝ 1916 թ. հուլիսի 15-ին Հալեպի նահանգապետարան հղած

հեռագրի պատճենը եւ դրա հայերեն թարգմանությունը ներկայացնում է Akunq.net-ը:

Հեռագրում հրահանգվում է բոլոր հայերին՝ կանանց ներառյալ, պահել արքայազմերում եւ ոչ մի արտոնագիր չտալ, որով հնարավոր կլինի նրանց՝ այլ վայրեր տեղափոխվելը: Հրահանգը վերաբերում է նույնիսկ մուսուլմանների ընտանիքներում ապրող հայերին:

Մույն փաստաթուղթը օսմանյան արխիվում գտել, թարգմանել եւ Akunq.net-ին է տրամադրել ամերիկաբնակ պոլսահայ ուսումնասիրող Գեւորգ Հակոբյանին:



**Թուրքիայում դատարանի որոշմամբ  
դադարեցվել է Սուրբ Կիրակոս եկեղեցու  
պետականացումը**

06.04.2017



Թուրքիայի վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել դադարեցնել Դիարբեքիրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցու պետականացման գործընթացը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Սուրբ Կիրակոսի եկեղեցու հիմնադրամի փաստաբանները պետականացման դեմ հայց են ներկայացրել վճռաբեկ դատարան՝ շեշտելով, որ եկեղեցու պետականացումը հակասում է օրենքին:

«Պետականացման որոշումով առհամարվել են նախարարների խորհրդի որոշումը կապված մշակույթային ժառանգությունների պահպանության հետ: Բացի վճռաբեկը նման անօրինական պետականացումները չեղարկելու վերաբերյալ դրական ընդունված մի շարք որոշումներ ունի: Պետականացումը հակասում է նաև Լոզանի պայմանագրին», – նշվել էր հայցադիմումում:

Վճռաբեկը բավարարել է Սուրբ Կիրակոս եկեղեցու հիմնադրամի հայցը՝ եկեղեցու պետականացման գործընթացը կանգնեցնելու որոշում կայացնելով: Վճռաբեկի որոշման մեջ նշվել է, որ պետականացման հետ կապված հարցում է ուղարկվել համապատասխան մարմիններին, սակայն պատասխան չեն ստացել, թե ինչ հիմքերով են պետականացնում եկեղեցին:

Նշենք, որ Թուրքիայի նախարարների խորհրդի որոշումով Դիարբեքիրի Սուրբ Կիրակոսի շրջանում գտնվող բոլոր կառույցները, այդ թվում Դիարբեքիրի Սուրբ Կիրակոսը, պետականացվել են: Պատճառաբանությունն այն էր, որ քուրդ զինյալների հետ բախումների հետևանքով վնասված Սուրբ Կիրակոսը պետք է պետական միջոցներով վերականգնվի, այդ թվում հայկական եկեղեցիները:

Մերձավոր Արևելքի ամենամեծ եկեղեցիներից մեկի՝ Սուրբ Կիրակոսի վերաբացումն ու օծումը տեղի է ունեցել 2011-հոկտեմբերի 22-ին, իսկ առաջին պատարագը մեկ օր անց՝ հոկտեմբերի 23-ին:

Սուրբ Կիրակոսի վերանորոգումը իրականացվել է Դիարբեքիրցի հայերի եւ Դիարբեքիրի քաղաքապետարանի աջակցությամբ:

Սուրբ Կիրակոսը վերաբացվել է որպես գործող եկեղեցի:

**Սփյուռք**

**Թուրքահայ ռեժիսոր Օզջան Ալիեր.  
Թուրքիան նման է բազմաբնակարան տան,  
որտեղ փակ են բոլոր դռները (ֆոտո)**

26.03.2017



Հեռուստատեսության սիրահարներն այս տարի եւս մեկ նվեր ստացաւ. հունվարին եթեր հեռարձակվեց թուրքական նոր «Ծիծեռնակի փոթորիկը» հեռուստատեսային: Երկվորյակ եղբայրների պատմությունը, որոնք այդպիսին չեն, կիստաքրքրի նաև հայ հեռուստադիտողին, քանի որ ռեժիսորը հայկական ծագմամբ Օզջան Ալիերն է:

Ալիերը համշենահայ է: Նա ծնվել է 1975-ին՝ Թուրքիայի հյուսիս-արևելքում գտնվող Հոփա քաղաքում: Այդ տարածքը ժամանակին ներառված է եղել Մեծ Հայքի Գուգարք նահանգում: Այստեղ այժմ էլ բնակվում է հեմշիլների էթնիկ խումբը (համշենցիներ): Ալիերն իրեն հայ է համարում, նա ամուսնացել է Հրանտ Դինքի զարմուհու՝ Լուսինի հետ: Ստամբուլի համալսարանում նա նախ ֆիզիկա, ապա գիտության պատմություն է ուսումնասիրել: 2000-ականների սկզբին տարվել է կինոյով եւ սկսել կինոստուդիայում ռեժիսորի օգնական աշխատել:

Իր առաջին կարճամետրաժ «Մոմի» ֆիլմն Ալիերը նկարահանել է համշենյան բարբառով եւ դատապարտվել Թուրքիայի քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածով՝ «անարգանք թուրքական ինքնագիտակցությանը»: Ռեժիսորին տուգանել են ու մեկ տարի պայմանական ազատազրկման դատապարտել՝ պայմանով, որ հինգ տարի նա չպետք է շոշափի Հայոց ցեղասպանության թեման:

2009-ին Երեւանի 6-րդ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնական ծրագրում ներկայացվել է նրա դեբյուտային լիամետրաժ «Աշուն» ֆիլմը, որը «Film New Europe» պարբերականն անվանել է «թուրքական կինոյի նոր ձայն»: Երիտասարդի պատմությունը, ով տասը տարի բանտում լինելուց հետո հայրենի գյուղ է վերադառնում, նկարահավել է Կինոյի համաշխարհային հիմնադրամի աջակցությամբ: Ֆիլմն ունի հրաշալի գեղարվեստական հատկանիշներ ու արժանի էր բարձր պարգևի: Սակայն որոշ հայ կինեմատոգրաֆներ էթիկայից դուրս համարեցին Հայաստանում թուրքական ֆիլմին մրցանակ տալը: Սակայն ժյուրիի նախագահ ճապոնացի Կոհեա Ագուրին պնդել է կինոնկարին հատուկ դիպլոմ եւ Կինոմամուլի միջազգային ֆեդերացիայի մրցանակ հանձնել:

2012-ին Ալիերը կրկին «Ոսկե ծիրան»-ին նոր ֆիլմ ներկայացրեց՝ «Ապագան տեսնում է հավետ», որը դրամա է քուրդ ժողովրդի մասին: Ռեժիսորը նշում է, որ դրանում արտացոլված են թուրք հասարակությունում առկա բոլոր խնդիրները:

«Թուրքիան նման է բազմաբնակարան տան, որտեղ փակ են բոլոր դռները: Երբ խնդիր է ծագում, բնակարանի դուռն ուղղակի բանալիով փակվում է»:

2011-ի սեպտեմբերին ֆիլմը թուրքական «Ոսկե գունդ» կինոփառատոնի ժամանակ Թուրքիայի կինոքննադատների ասոցացիայի հինգ մրցանակ է ստացել, այդ թվում՝ որպես «Լավագույն ֆիլմ»:

Երեւանում այն արժանացել է Էկումենյան ժյուրիի հատուկ հիշատակությանը: Իսկ նույն տարվա սեպտեմբերին Օզգան Ալփերը «Եվրասիա» ութերորդ միջազգային կինոփառատոնի ժամանակ արժանացել է «Լավագույն պրոդյուսեր» մրցանակին:

Ռեժիսորի վերջին աշխատանքը «Քամու հիշողությունները» պատմական դրաման է: Ֆիլմը ռեժիսորն այսպես է բնութագրում. «Դա պատմություն է հավերժ գուգահեռների մասին՝ պատմական իրադարձությունների՝ կոնկրետ մարդու անհատական ընկալման եւ ամբողջ Թուրքիայում այդ իրադարձության ընկալման մասին»: Եւ չնայած կինոնկարը պատմում է Արամ անունով հայագրի բանաստեղծի մասին, ով Երկրորդ աշխարհամարտի վերջին տարիներին ստիպված է եղել փախչել Թուրքիայից՝ իր աշխատանքը ռեժիսորը նվիրել է 1915-ի ողբերգության զոհերին, որից դասեր չեն քաղել եւ որի արձագանքներն իրենց մասին իմաց են տալիս: Անթալիայի 52-րդ կինոփառատոնի ժամանակ ֆիլմը երեք մրցանակի է արժանացել, այդ թվում՝ «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին:

2016-ի մայիսի 27-ին Ռոթերդամ քաղաքում բացվել է «Կարմիր կակա» կինոփառատոնը, որտեղ Ալփերը ստացել է համանուն մրցանակը: Իսկ հունիսին Մոնրեալում տեղի ունեցած թուրքական ֆիլմերի փառատոնին, որտեղ 130 կինոնկար է ներկայացված եղել, Ալփերը եղել է լավագույնների եռյակում:

«Իմ կինոնկարները քաղաքական, քարոզական նպատակներ չեն հետապնդում: Բայց այն, որ դրանց հերոսները խոսում են համշենքերեն, յուրովի բողոք է» – ասել է ռեժիսորը:

## Արք. Աթեշյանը պետք է ընտրի՝ թուրքական պետության հե՛տ, թե՛ եկեղեցու հետ լինել. Մաշալյան

23.03.2017



Պոլսո հայոց պատրիարքի թեկնածուներից, պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ, եպիսկոպոս Մահակ Մաշալյանը արք. Աթեշյանի պահվածքի հետ կապված հայտարարություն է արել:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ի հետ զրույցում եպիսկոպոս Մահակ Մաշալյանը նշել է, թե արք. Աթեշյանի պահվածքից զգացվում է, որ նա ցանկանում է թուրքական պետության ուժերով մնալ նշանակովի պաշտոնում: «Պատրիարքական տեղապահ Բեքչյանը այս թեմայով կարելու հայտարարություն է արել: Դրանից հետո արք. Աթեշյանը պետք է ընտրի՝ թուրքական պետության հե՛տ, թե՛ եկեղեցու հետ լինել»-ասել է Մաշալյանը:

Անդրադառնալով պատրիարքի ընտրության հետ կապված աշխատանքներին, եպիսկոպոս Մաշալյանը շեշտել է, թե արդեն մնում է սպասել ապրիլի 16-ի հանրաքվեին, որից հետո իրականացնել աշխատանքներ: Նա միեւնույն ժամանակ նշել է, թե կփորձեն մինչ այդ կապի մեջ մտնել թուրքական իշխանությունների հետ պատրիարքին ընտրության կազմակերպման հետ կապված նրանց վերաբերմունքը ճշտելու:

Նշենք, որ արք. Գարեգին Բեքչյանը արք. Աթեշյանին կոչ էր արել պահել Վեհափառի մոտ տված խոսքն ու տեղապահի ընտրությունից հետո հրաժարական տալ կառավարության կողմից նշանակված ու եկեղեցական կարգում գոյություն չունեցող պաշտոնից: Սակայն արք. Աթեշյանը պնդել էր, թե չի հասունացել իր հրաժարականի պահը:

Ավելի վաղ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ միասին համաձայնություն էր կայացվել, որ Պոլսո հայոց պատրիարքական տեղապահի ընտրություն է տեղի ունենալու, որից հետո կառավարության կողմից նշանակված փոխպատրիարք արք. Աթեշյանը հրաժարական է տալու: Սակայն ընտրության արդյունքում հաղթել է արք. Բեքչյանը, որից հետո արք. Աթեշյանը հրաժարական չի տալիս: Նա նահանգապետարանից մի թուղթ է ներկայացրել, թե նահանգապետարանը օրինական չի համարում տեղապահի ընտրությունը: Ըստ իրավաբանների, նահանգապետարանը իրավունք չունի միջամտելու ներեկեղեցական գործերին:

## Արք. Աթեշյանը պնդել է, թե իր հրաժարականի պահը դեռ չի հասունացել

23.03.2017



Պոլսո հայոց պատրիարքական տեղապահ արք. Բեքչյանի կոչին պատասխանել է թուրքական կառավարության կողմից փոխպատրիարք նշանակված արք. Արամ Աթեշյանը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արք. Աթեշյանը նշել է, թե Էջմիածնում Վեհափառի ներակայությամբ ձեռք բերված համաձայնությունը խախտել են մյուս կողմի հոգեւորականները, սակայն ինքը վիճակը չթեժացնելու համար կրկին չի դիմել Վեհափառին:

Արք. Աթեշյանը շեշտել է, թե պատրիարքի աթոռի ոչ մեկի սեփականությունը կամ ժառանգությունը չէ, սակայն ինքը որպես փոխպատրիարք շարունակելու է պաշտոնավարել մինչ իրավիճակը հասունանա հրաժարականի համար:

Արք. Աթեշյանը նորընտիր տեղապահ արք. Բեքչյանի կոչ-նամակը պոպուլիստական քայլ է համարել՝ նշելով, թե այն ոչ մի օգուտ չի տա ստեղծված փակուղային իրավիճակում:

Նշենք, որ արք. Գարեգին Բեքչյանը արք. Աթեշյանին կոչ էր արել պահել Վեհափառի մոտ տված խոսքն ու տեղապահի ընտրությունից հետո հրաժարական տալ կառավարության կողմից նշանակված ու եկեղեցական կարգում գոյություն չունեցող պաշտոնից:

Ավելի վաղ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ միասին համաձայնություն էր կայացվել, որ Պոլսո հայոց պատրիարքական տեղապահի ընտրություն է տեղի

ունենալու, որից հետո կառավարության կոմիտեի նշանակված փոխպատրիարք արք. Աթեշյանը հրաժարական է տալու: Սակայն ընտրության արդյունքում հաղթել է արք. Բեքչյանը, որից հետո արք. Աթեշյանը հրաժարական չի տալիս: Նա նահանգապետարանից մի թուղթ է ներկայացրել, թե նահանգապետարանը օրինական չի համարում տեղապահի ընտրությունը: Ըստ իրավաբանների, նահանգապետարանը իրավունք չունի միջամտելու ներկեղեցական գործերին:

## Կարո Փայլանը թուրք նախարարից պարզաբանում է պահանջել Տեղապահի ընտրությանը միջամտելու համար

20.03.2017



Պոլստ հայոց պատրիարքական Տեղապահի ընտրությունից հետո Ստամբուլի նահանգապետարանից ստացված գրության հետ կապված «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը գրավոր հարցադիմում է ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուին:

Թուրքական Bianet-ի փոխանցմամբ՝ Կարո Փայլանը ՆԳ նախարարից պարզաբանում է պահանջել, թե ինչ իրավական հիմքերով է Ստամբուլի նահանգապետարանը պատրիարքական Տեղապահի ընտրությունից հետո գրություն ուղարկել, որում նշվել է, թե իբր անցկացված ընտրությունն ու առաջիկայում կազմակերպվելիք Պատրիարքի ընտրությունը իրավական հիմքեր չունեն:

Նշենք, որ Պոլստ պատրիարքական Տեղապահի ընտրությունից հետո երբ պարզ է դարձել, որ հաղթել է Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ, արք. Գարեգին Բեքչյանը, Պոլստ փոխպատրիարք արք. Աթեշյանը լրագրողներին է ցույց տվել մի գրություն, որում Ստամբուլի նահանգապետարանը ոչ իրավական է համարել տեղի ունեցող գործընթացը:

Տեղի ունեցածից հետո արք. Աթեշյանը հրաժարվում է կատարել խոստումն հրաժարական տալ, ինչը շարունակում է լարված պահել ստամբուլահայ համայնքը:

## Արքեպիսկոպոս Բեքչյանը արք. Աթեշյանին կոչ է արել հարգել Էջմիածնում Վեհափառի ներկայությամբ տված խոսքը

22.03.2017

Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն Պոլստ հայոց պատրիարքական տեղապահ ընտրված արք. Գարեգին Բեքչյանը բաց նամակով դիմել է թուրքական կառավարության կողմից նշանակված արք. Արամ Աթեշյանին:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արքեպիսկոպոս Գարեգին Բեքչյանը արք. Աթեշյանին կոչ է

արել հարգել Էջմիածնում Վեհափառի հետ միասին ձեռք բերված համաձայնությունն ու հրաժարական տալ թուրքական կառավարության կողմից նշանակված պաշտոնից, որը չկա հայկական եկեղեցական կարգում:



Նշենք, որ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ միասին համաձայնություն էր կայացվել, որ Պոլստ հայոց պատրիարքական տեղապահի ընտրություն է տեղի ունենալու, որից հետո կառավարության կոմիտեի նշանակված փոխպատրիարք արք. Աթեշյանը հրաժարական է տալու: Սակայն ընտրության արդյունքում հաղթել է արք. Բեքչյանը, որից հետո արք. Աթեշյանը հրաժարական չի տալիս: Նա նահանգապետարանից մի թուղթ է ներկայացրել, թե նահանգապետարանը օրինական չի համարում տեղապահի ընտրությունը: Ըստ իրավաբանների, նահանգապետարանը իրավունք չունի միջամտելու ներկեղեցական գործերին:

Թեյն, 20 Մարտի 2017

Գնդախորհի Տ.Արամ Աթեշյան Աթեշյանի Կաթողիկոսության հայոց Կաթողիկոս

Միտիի Արևազան Թորաթ

15 Մարտի 2017 թ. Պոլստ Պատրիարքարանին մեջ գտնարում ներկայակա համապատասխան ընտրության կատարման պարտադրական տեղապահի ընտրության արդյունքը մասին է ճշգրիտ Այս ընտրությունը տեղի ունեցած է համապատասխան մեր ներկայից անստորագրություններն ու կարգ ու կանոնները շրջափակել մեջ: Մասի, ամեն առիթով կուսակցությունն նկատ համարել կազմակերպել ներկայակա իշխանության կազմին վրայ չար տարածելու տարրությունը կր թողու: Խնդրում ենք յստանալու մա կենսա նման կեցումներ, յստակալս յարգելու համար Տալս: Եղիկոսյ կարգն ու կանոնները:

Անհրաժեշտ էր տեսնել նաև ժողովին Մայր Աթոս Ս.Էջմիածնի մեջ, Վեհափառ: Տալստեղծի իմաստաստությունը 23-24 Փետրուար 2017 թ. կատարում մեր միասնական խորհրդակցության իբրև աղոթից կատարված յստանալու ընտրությունները: Մասի, վստահ եմ, թե 'ուր մա որպես քաղաքական ներկայակա, մեր ալ առաջնահերթ պարտադրությունն է պահել ներկայից անստորագրություն ու պրոնի համապատասխան կերպով: Վստանելով այս պարտադրության, պրոնի թեկտրի յմա այստ դառնելով պրոնի արքեպիսկոպոս Գարեգին Բեքչյան: Ես մասնակա: Պատրիարքարանի կողմ յնքանուս տրամա մասնակալու մեջ յստապի նման արտապատրություններ:

Միտիայի մասնակալ սա ի գիտություն կ'ուսպե մեջ տեղան պահել, որ յստանուկ մեղա: Գրք. Տ. Արամ Աթո. Մալալան տեղապահական փոխանորդ է մ ինքն է որ իմ քաղաքականության պրոնի հակ տեղապահական բոլոր պայմաններնուն:

Բաց առիթի համից ինձի ուղարկել մեկ պատճեն մասնակալության համար կուսակցության մեջ գտած դիմումագրին, եթե մեջ այդ գտած էր:

Մամ սիրոյ ողորմելի  
Գրք. Գր. Աթեշյան  
Կաթողիկոսական Տեղապահ

## Պոլստ պատրիարքական տեղապահ արք. Բեքչյանը հայտարարություն է տարածել

21.03.2017

Պոլստ հայոց պատրիարքական նորընտիր տեղապահ, արքեպիսկոպոս Գարեգին Բեքչյանը պատրիարքական ընտրությունների հետ կապված հայտարարությամբ է հանդես եկել:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Պոլստ պատրիարքական տեղապահ արք. Բեքչյանը շնորհակալություն է հայտնել ընտրությանը մասնակցած հոգեւորականներին, ինչպես նաև ընտրվելու կապակցությամբ իրեն շնորհավորած հայ համայնքի անդամներին ու տարբեր կազմակերպություններին:

«Ուզում եմ տեղեկացնել, որ Պոլսոս հայոց 85-րդ պատրիարքին ընտրելու գործընթացը ըստ նախատեսվածի իրականացնում ենք: Հավատում եմ վստահում եմ, որ գործընթացի մեջ ներգրաված պատասխանատուները ջանքեր կգործադրեն այն խաղաղ անցկացնելու համար: Այս համատեքստում ուզում եմ, որ մեր հասարակությունը չանհանգստանա», –ասել է արք. Բեքչյանը:

## ԱՄՆ-ում մահացել է երաժիշտ եւ «Սիգարի արքա» Ավո Ուվեզյանը

25.03.2017

ԱՄՆ-ում 91 տարեկանում մահացել է երաժիշտ եւ «Սիգարի արքա» Ավո Ուվեզյանը:



Երաժիշտը մահացել է Ֆլորիդայի Օրլանդո քաղաքում, իր ծննդյան տարեդարձից երեք օր անց, հաղորդում է [Cigaroficionado](#) կայքը:

Ավո Ուվեզյանը Ֆրենք Սինատրայի Strangers in the Night անմահ երգի հեղինակն է: Բացի մասնագիտական երաժշտական կարիերայից, Ավոն նաև ամենաթանկարժեք ու էլիտար սիգարների AVO ապրանքանիշի հիմնադիրն է: Այդ սիգարների մեկ տուփն արժե 100-500 դոլար:

Զրոսաշրջության անկման ժամանակաշրջանում Ավո Ուվեզյանը ձեռնարկել էր շրջագայություն դեպի Բաղդադ ու Թեհրան: Հենց այնտեղ էլ ամեն ինչ սկսվել էր ... Թեհրանում խմբին նկատել էր Իրանի շահ Ռեզա Փեհլեվին, ու լինելով ջազի մեծ սիրահար, նրանց հրավիրել էր իր պալատ: Այստեղ, պալատում, Ավո Ուվեզյանին օգնության էր հասել բազմաթիվ լեզուների իմացությունը (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, թուրքերեն, գերմաներեն ու պարսկերեն): Երբ Ուվեզյանին հարցրել են, թե որ լեզվով է նրա համար նախընտրելի հաղորդակցվելը՝ Ավոն պարսկերենն էր ընտրել, դրանով իսկ նվաճելով շահի համակրանքը: Հենց շահ Ռեզա Փեհլեվիի շնորհիվ է Ավո Ուվեզյանը հնարավորություն ստացել ուղևորվել ԱՄՆ ու ընդունվել Նյու Յորքի Ջուլիարդ հանրահայտ դպրոցը: Ամուսնանալով նյույորքցի ոսկերչի դստեր հետ՝ Ավո Ուվեզյանը որոշ ժամանակ զբաղվել է ոսկերչությամբ, բայց չի դադարել նաև երաժշտությամբ զբաղվել: Հակառակը, ոսկերչական գործը նրան դրա համար լրացուցիչ միջոցներ է ապահովել: 1958-ին ճակատագիրը նրան եւս մեկ երջանիկ անակնկալ է մատուցել՝ Լաս Վեգասում Ավո Ուվեզյանը ծանոթացել է Ֆրենկ Սինատրայի հետ: Մեկ տարի անց Ավո Ուվեզյանի գրած երգը՝ Broken Guitar («Կտրված կիթառ») անվանմամբ ներկայացվել է Ֆրենկ Սինատրային: Մեղեդիով հիացած Սինատրան առաջարկել էր ընդամենը երգի բառերը փոխել:

## Euronews-ը Սուրբ Ղազար կղզու մասին. Հայկական կղզի Վենետիկում

22.03.2017



Հայերը ժառանգություն են թողել ամբողջ Եվրոպայի տարածքում: Միսիթարյանների հայկական կաթոլիկ միաբանությունը, որն այդ ժառանգության ամենավառ օրինակներից է, այս տարի նշում է Եվրոպայի ամենակուլտային քաղաքներից մեկում իր ներկայության 300-րդ տարեդարձը: Այս մասին ասվում է Սուրբ Ղազար հայկական կղզու մասին հոդվածում, որը հրատարակվել է [Euronews](#) կայքում :

«Սան Չաքարիայից Վենետիկի ամենաուշագրավ անկյուններից մեկը ջերմանավ է մեկնում: Այս եզակի անկյունը կոչվում է Սան Լաջարո –դեյի-Արմենին կամ էլ Սուրբ Ղազարի հայկական կղզի: Այս տարի լրանում է 300-րդ տարին, երբ կղզին դարձել է Միսիթարյան միաբանության տունը», - ասվում է հոդվածում:

Հոդվածը պատմում է նաև Միսիթար Սեբաստացու մասին, որը ծնվել է Սեբաստիայում 1676-ին: Նա Կոնստանդնուպոլիս էր ուղևորվել, որտեղ նրա շուրջ հավաքվել էր աշակերտների խումբ, որը 1701-ին վերածվել էր վանական համայնքի: Բախվելով իշխանությունների դիմադրությանը՝ վանահայր Միսիթարը ու նրա հետևորդները տեղից տեղ էին տեղափոխվում՝ սկզբում Հունաստան, իսկ հետո էլ՝ Վենետիկ: Վենետիկում Միսիթարին հաջողվել է նվեր ստանալ Սուրբ Ղազար փոքր կղզին:

«Հաջորդ դարերի ընթացքում Միսիթարյան միաբանությունը խորը ազդեցություն է թողել գիտության, կրթության ու հրատարակչական գործի վրա՝ թե ընդհանուր Եվրոպայում, թե հայոց աշխարհում», - նշվում է հոդվածում:

Առայսօր եկեղեցին շարունակում է գրքեր հրատարակել: Վենետիկը աշխարհի երկու քաղաքներից մեկն է, որը կարող է պարծենալ, որ 300 տարի շարունակ տարեկան գոնե մեկ հայերեն գիրք է հրատարակում:

Այդ հոգևորականների ջանքերի ու գործունեության շնորհիվ հայտնվել են հին ձեռագրերի առաջին հրատարակությունները, եվրոպական ստեղծագործությունների թարգմանությունները, հայկական ժառանգությունը ցուցադրվել է Եվրոպայում ու դրա սահմաններից դուրս:

«Մխիթարյանների միաբանությունը միշտ կապող կամուրջ է եղել Հայաստանի ու Եվրոպայի միջև», - ասում է տերհայր Մերոբ Զամուրյանը:

Մակայն միաբանության առավել կարևոր դերակատարումներից է եղել լեզվի ու ինքնության զարգացմանը նպաստելը: Հենց Մխիթարյան միաբանությունն է առաջինը հրատարակել հայոց լեզվի ժամանակակից բառարաններ: Մենք Վենետիկի հայ հոգևորականներին են պարտական նաև հետազոտության ու կրթության նկատմամբ ժամանակակից գիտական մոտեցումների համար:

## Պատմաբան. Սուրբ Աստվածածին եկեղեցին Ուկրաինայի ամենահին հայկական տաճարներից է

20.03.2017

Կիևում հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմությունը նոր հետազոտությունների կարիք ունի, հաղորդում է AnalitikaUA.net-ը: Այս մասին հայտնել է Ուկրաինայի հայերի միության պատմամշակութային ժառանգության հարցերով կոմիտեի ղեկավար Դավիթ Դավթյանը:

«Կուտակված փաստացի նյութը թույլ է տալիս պնդել, որ Կիևի հայկական տաճարներից մեկը գոյություն է ունեցել XIV դարի վերջին, որը, հնարավոր է վերանորոգվել XV դարում: 1530-1580-ին եկեղեցու կործանման հետևանքով հայերը պատարագ են մատուցել Սուրբ Սոփիայի տաճարի ներքին պատկերասրահում: Համաձայն պահպանված վկայությունների՝ XVI վերջին եւ XVII դարի սկզբին քաղաքում նորից հայկական եկեղեցի էր գործում՝ հայտնի որպես Սուրբ Աստվածածնի եկեղեցի, որը գոյություն է ունեցել մինչև 1680-ականները», - ասել է պատմաբանը: Ինչպես նշել է Դավթյանը՝ այսօր շատ կարևոր է ուսումնասիրել Կիևի հայ եկեղեցու ամբողջական պատմությունը:

## Ստամբուլի փոխնահանգապետը պնդել է. Արք Աթեշյանը դեռ փոխպատրիարք է

14:13, 01.04.2017



Պոլստ հայոց փոխպատրիարք արք. Աթեշյանը, Կրոնական ժողովի ատենապետ, եպիսկոպոս Մաշայանը, Տրդատ քահանա Ուզունյանը հանդիպել են Ստամբուլի փոխնահանգապետ Ազիզ Մերջանի հետ եւ քննարկել է Հայոց պատրիարքի ընտրությունների շուրջ ստեղծված իրավիճակը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, եպիսկոպոս Մաշայանը նշել է, թե հանդիպման ժամանակ փոխնահանգապետն ասել է, թե առանց համապատասխան պետական ընթացակարգերի է ընտրվել տեղապահը, որը չէր կարող ընդունվել պետության կողմից:

Մաշայանը նշել է, թե հայ համայնքը Պատրիարքի ընտրությունը արագացնելու միտում չունի, բայց պատրիարքի ընտրության հետ կապված ճգնաժամը վաղուց գոյություն ունի, որը պետք է լուծվի: Մաշայանը փոխնահանգապետի խոսքին ի պատասխան շեշտել է, թե պետությունը երբեք տեղապահի ընտրության հարցին չի միջամտել:

Իր խոսքում Ստամբուլի փոխնահանգապետը նշել է, թե պետությունը ցանկություն չունի միջամտել եկեղեցու ներքին հարցերին, սակայն իրենց համար մինչ ընտրությունները արք. Արամ Աթեշյանը հանդիսանում է փոխպատրիարք, իսկ սահմանադրական բարեփոխումների հանրաքվեից հետո արդեն ընթացք կտրվի պատրիարքի ընտրության նախապատրաստությանը:

## Արք Աթեշյանը հրաժարվել է ճանաչել ընտրված տեղապահ արք. Բեքյանի լիազորությունները

05.04.2017



Պոլստ հայոց պատրիարքարանում փոխպատրիարք, արք. Աթեշյանի ու ընտրված տեղապահ, արք. Բեքյանի միջև հանդիպման հետ կապված մանրամասներ է հայտնի դարձել:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Պոլստ պատրիարքական տեղապահ ընտրված արքեպիսկոպոս Գարեգին Բեքյանը նշել է, թե արք. Աթեշյանի հետ հանդիպմանը մասնակցել են նաև եպիսկոպոս Մաշայանը, Պետրոս Ծիրինօղլուն եւ Թորոս Ալջանը:

Բեքյանը պատմել է, որ արք. Աթեշյանը սկզբում հրաժարվում էր հանդիպել իր հետ, այնուհետ հանդիպման ժամանակ 2 անգամ լքել է հանդիպման սրահը:

«Ես արք. Աթեշյանին հարցրեցի, թե գործընթացն ինչպե՞ս է շարունակվելու եւ նրա ու իմ լիազորությունների շրջանակը որն է լինելու: Նա ասաց, որ ես դեռ լիազորություններ չունեմ, եւ երբ ընտրական գործընթացը կսկսվի, այն ժամանակ էլ ես կսկսեմ իմ պարտականությունները: Ես էլ նրան ասացի, որ իր առաջ քաշած պայմանները գրավոր ներկայացնի, որից հետո նորից կնստենք քննարկման», - ասել է արք. Բեքյանը:

## Արք. Աթեշյանն ասել է, թե ինչու է եկեղեցու դռները փակել արք. Բեքյանի ու եպիսկոպոս Մաշայանի առջև

07.04.2017

Պոլստ հայոց պատրիարքական տեղապահ ընտրված արք. Գարեգին Բեքյանը պատմել է արք. Աթեշյանի հետ հանդիպման մանրամասները:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արք. Բեքյանը նշել է, թե արք. Աթեշյանի հետ հանդիպմանը

պարզաբանում է պահանջել Սուրբ Աստվածածին եկեղեցու դռները հավատացյալների ու իր դեմ փակելու հետ կապված: Բեքյանի խոսքով՝ արք. Աթեշյանը պնդել է, թե տեսնելով մեծ թվով մարդկանց՝ վախեցել է եւ խուսափել դռները բացելուց: «Ես շեշտեցի, որ եկեղեցու դռները որեւէ պարագայում չպետք է փակել, մասնավորապես երբ հավատացյալների հետ միասին կանգնած էին 2 եպիսկոպոսներ: Աթեշյանին ասացի, որ նման բաներ եթե շարունակվի, ժողովրդի աչքին նա վատ մարդ կդառնա:

Հանդիպման ժամանակ արք. Աթեշյանը նշեց, որ ապրիլի 16-ի սահմանադրական ընտրություններից հետո ես կարող եմ սկսել տեղապահի պարտականությունները, իսկ նա մինչ այդ կմնա փոխպատրիարք:

Նշենք, որ օրեր առաջ, երբ Պոլստ պատրիարքության կրոնական ժողովի ատենապետ եպիսկոպոս Մաշալյանը ցանկացել էր Ստամբուլ վերադարձած արք. Բեքյանի համար բարի գալուստի պատարագ մատուցել, արք. Աթեշյանի հրահանգով փակել էին եկեղեցու դռները, սակայն որոշ ժամանակ անց բացել էին: Սակայն պատարագին պատրիարքարանից ոչ մի հոգևորական չի մասնակցել:

## Գլենդելի քաղաքապետական խորհրդի երեք թափուր տեղերը կգրադեցնեն հայերը

05.04.2017



Գլենդելում ապրիլի 4-ին կայացած քաղաքի խորհրդի ընտրություններում, նախնական արդյունքների համաձայն, հաղթանակ են տարել հայեր Վրեժ Աղաջանյանը, Արա Ջեյմս Նաջարյանը եւ Չարեհ Սինանյանը, հաղորդում է [Los Angeles Times](#)-ը:

Ըստ այդմ, Վրեժ Աղաջանյանն ստացել է 6 288 ձայն, Արա Նաջարյանը՝ 6 132 ձայն եւ Չարեհ Սինանյանը՝ 5 998 ձայն: Վերջնական արդյունքները կհրապարակվեն ապրիլի 21-ին, քաղաքի կայքում:

Նշենք, որ Գլենդելի քաղաքային խորհրդի 3 թափուր աթոռների համար պայքարում են 10 թեկնածուներ, որոնցից 4-ը հայեր են՝ Արա Ջեյմս Նաջարյանը, Վրեժ Աղաջանյանը, Օնիկ Մեհրաբյանն ու Չարեհ Սինանյանը: Վերջինս քաղաքապետական խորհրդի գործող անդամ էր:

Վրեժ Աղաջանյանը մասնագիտության ճարտարագետ է, նա հայտնի է հայկական կարելային հեռուստատեսությամբ քաղաքական թոք-շոուներ վարելով: Աղաջանյանը նշել է, որ իր ընտրվելու դեպքում՝ կնպաստի Գլենդելի քաղաքային խորհրդի թափանցիկ աշխատանքին, նաեւ կաջակցի փոքր բիզնեսին:

Գլենդելի նախկին քաղաքապետ Արա Նաջարյանն իր հերթին նշել է, որ ջանքեր կգործադրի քաղաքի հասարակական տրանսպորտի ցանց ընդլայնելու ուղղությամբ:

Նշենք, որ սա Չարեհ Սինանյանի համար Գլենդելի քաղաքային խորհրդում երկրորդ ժամկետն է լինելու: Նա խոստանում է Գլենդելում բնակարանների ձեռքբերման ավելի մատչելի տարբերակներ մշակել: Սինանյանը գիշերն ընկերների հետ նշել է իր նախնական հաղթանակը:

## Կիլիկիո կաթողիկոսությունը ՄԻԵԳ-ին առաջարկել է արագացնել Միսի դատի ընթացքը

04.04.2017



Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավական հանձնախումբը՝ Արամ Ա կաթողիկոսի հանձնարարությամբ, դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ կոչ անելով արագացնել Միսի Կաթողիկոսարանի վերադարձի հարցով դատաքննությունը:

Պահանջում նաեւ նշված է՝ 2016թ. դեկտեմբերի 7-ին ներկայացված ծ դատական թղթածրարը Թուրքիայի դատարանին չհղել, նկատի ունենալով Թուրքիայի ներքին անորոշ վիճակը, դատական-իրավական օրենքների խախտումը, դատավորների եւ փաստաբանների նկատմամբ սպորինի վերաբերմունքը եւ, ընդհանրապես բռնատիրական կացությունը: «Արդարեւ, մտահոգիչ կացություն է, որի մասին ԵՄ Մարդու իրավունքների հանձնակատարը փետրվարի 15-ին, Վենետիկի հանձնաժողովը մարտի 13-ին, ինչպես նաեւ բազում երկրներ եւ կազմակերպություններ հայտնել են իրենց մտահոգությունները», - ասվում է նամակում:

## Միջազգային

### Քալիֆորնիայի սենատի անդամը Թուրքիային կոչ է արել վերադարձնել հայկական եկեղեցիները

14:40, 21.03.2017



Կալիֆորնիայի սենատի անդամ Էնթոնի Պորտինտինոն մարտի 20-ին բանաձեւ է ներկայացրել, համաձայն որի՝ ապրիլը պետք է դառնա Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ամիս: Բանաձեւում նաեւ առկա է կոչ Թուրքիայի Հանրապետությանը՝ առգրավված եկեղեցական օբյեկտները օրինական տերերին վերադարձնել, հաղորդում է Asbarez-ը: «Չնայած Քալիֆորնիայի օրենսդիր մարմինը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը՝ մեր հետազոտություններ ցույց են տալիս, որ եկեղեցական սեփականության հարցը դեռեւս չի ներառվել

օրենսդիր ժողովի պալատի ընդունած բանաձեւում: Ցանկացած երկրում կրոնական խտրականությունը հակասում է համամարդկային արժեքներին: Ես միանում եմ բազմաթիվ կողմնակիցներին, ովքեր կարծում են, որ հայկական պատմական եկեղեցիները հայ ժողովրդի մշակութային ժառանգություն են եւ պետք է վերադարձվեն իրենց օրինական սեփականատերերին, որպեսզի դրան օգտագործեն համապատասխան կրոնական նպատակներով», - հայտարարել է սենատոր Պորանտինոն:

**Դիարբեքիրում քրդերը մեծ շուքով տոնում են Նովրուզը**  
14:23, 21.03.2017



Թուրքիայի քրդաբնակ Դիարբեքիրում տասնյակ հազարավոր քրդեր մարտի 21-ին մեծ շուքով տոնում են Նովրուզը: Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ Դիարբեքիրում մոտ 125 հազար քմ տարածք որպես Նովրուզի տոնակատարության վայր հսկողության են առել մեծ թվով ոստիկանական ուժեր: Տարածք մտնողներին ոստիկանները մանրակրկիտ ստուգում են: Նշենք, որ մարտի 21-ին արեւելքի մի շարք երկրներում տոնում են Նովրուզը, որը թարգմանաբար նշանակում է նոր օր:

**Նիդերլանդների դատախազությունը պահանջում է պատիժ նշանակել հայերի դեմ բռնություններ հրահրելու համար**  
04.03.2017



Հոլանդիայի Այմելո քաղաքում տեղի է ունեցել Հաագայի Թուրք-ադրբեջանական մշակութային միության նախագահ Իլիամ Աշկինի դատավարությունը: Պարոն Աշկինը մեղադրվում է հայերի դեմ բռնություն եւ ատելություն սերմանելու մեջ, քանի որ նա Այմելո քաղաքում Մեծ Եղեռնի հուշահամալիրի դեմ կազմակերպված թուրքական հանրահավաքի ժամանակ վանկարկել է «Ղարաբաղը լինելու է հայերի գերեզմանը»: Այս կարգախոսով նա բռնություն է հրահրել եւ վիրավորել է մի խումբ մարդկանց, քանի որ նրանք ծագումով հայ են:

Ինչպես հայտնի է, 2014 թվականի հունիսի 1-ին Այմելո քաղաքում տեղի է ունեցել թուրքական հանրահավաք, որը ուղղված էր Այմելոյի Հայ Առաքելական եկեղեցու հողամասում տեղադրված Հայոց ցեղասպանության գոտերի հուշահամալիրի դեմ: Հոլանդահայ կազմակերպությունները, մասնավորապես Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան (FAON www.faoon.nl) եւ Հոլանդիայի Հայ Դատի հանձնախումբը զանգատ էին ներկայացրել հանրահավաքի ընթացքում կատարված հակահայ հայտարարությունների դեմ:

Երկու ժամ տևած դատական նիստին ներկա էին բազմաթիվ հայեր եւ թուրքեր, ինչպես նաև հոլանդական, հայ եւ թուրք ՉԼՄ-ների թղթակիցներ: Դատավարության ընթացքում ցուցադրվեց թուրքական ցույցի տեսահոլովակը, որտեղ պարոն Աշկինը մի քանի անգամ վանկարկում է «Ղարաբաղը լինելու է հայերի գերեզմանը», իսկ մի քանի հազարանոց ամբոխը կրկնում է այդ արտահայտությունը:

Պարոն Աշկինը դատարան էր ներկայացել իր փաստաբան պարոն Պլասմանի հետ: Նա պատասխանեց դատավորի եւ դատախազի հարցերին: Նա հայտարարեց, որ ինքը չի կատարել որևէ

հանցագործություն, քանի որ իր կատարած արտահայտությունը վերաբերում է կոնկրետ տարածաշրջանի, որտեղ այժմ իրավիճակն այնպես է, որ հնարավոր է բռնկվի պատերազմ եւ լինի արնահեղույթ: Նա համոզված է, որ որևէ սխալ չի գործել: Այն հարցին, թե արդյո՞ք նա զոչում է իր կատարած արարքից եւ ցանկանում է ավստոսանք հայտնել, նա պատասխանեց, որ նրա տեսկետը չի փոխվել:

Դատախազը մանրակրկիտ ներկայացրեց գործի քննության ընթացքը եւ դատախազության պահանջների հիմքերը: Նա պահանջեց մեղադրյալին պատժել 80 ժամ պարտադիր աշխատանքով եւ երկու շաբաթ պայմանական ազատագրվմամբ՝ երկու տարի փորձական ժամկետի պայմանով: Սա հանդիսանում է մի ուժեղ ազդանշան: Դատախազության պահանջը հաշվի է առնում նաև այն փաստը, որ պարոն Աշկինը գործին չի ցուցաբերել խոր ըմբռնում եւ գոյություն ունի հանցագործության ռեցիդիվի վտանգ:

Դատավճիռը կայանալու է 2017 թ. մարտի 17-ին:

## Մշակույթ

### Ակնարկ Հայ ժողովրդի հայրենադարձությանը

19-20-րդ դարերում

Դր. Էդիկ Բաղդասարյան


#### Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը եւ հայերի ներգաղթը Պարսկաստանից

*Երեւանի գրավումից հետո, ռուսական բանակը հետապնդելով պարսիկներին, գեներալ Էրիսթովի գլխավորությամբ հոկտեմբերի 4-ին դուրս եկավ Նախիջևանից, հոկտեմբերի 13-ին, գրեթե առանց լուրջ դիմադրության հանդիպելու, գրավեց Թավրիզը: Թավրիզի գրավումը հարկադրեց Ֆաթհ-Ալի շահին հաշտություն խնդրել: Սակայն բանակցությունների եւ պայմանագրի ստորագրման ձգձգման պատճառով, 1828 թ. հունվարին ռուսները վերսկսում են հարձակումները, գրավում են Մարահորը, Ուրմիան, Խոյը, Սալմաստը եւ հունվարի 25-ին Արզաբիլը: Դրանից հետո նրանց ուժերը ուղղություն են վերցնում դեպի Թեհրան: Այդ պայմաններում էր, որ Ֆաթհ-Ալի շահը անգլիական դեսպան Մակդոնալդի միջոցով գեներալ Պասկևիչին հայտնեց, որ ընդունում է ռուսների առաջարկած հաշտության բոլոր պայմանները: Հաշտության բանակցությունների վերսկսման վայր նշանակվեց Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղը: 1828թ. փետրվարի 10 (22)-ին Թուրքմենչայում Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ կնքվեց երկկողմանի հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրով ռուս-պարսկական սահմանագիծը հարավում հասցվեց մինչեւ Արաքս գետը, Պարսկաստանը ճանաչեց Երեւանի եւ Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին, եւ պարտավորվեց վճարել 10 բուրլուր թուման (20 միլիոն ռուբլի արծաթ) ռազմական տուգանք, թույլ տալ քրիստոնյաներին իրենց ցանկություններով մշտապես բնակություն հաստատելու համար դադարեցնել ռուսական տիրապետության սահմանները:*

<sup>1</sup> - Դաւիթ Գրեկտեան, «Տարիք Իրան», Կ. Վ. 2006 թ., հ. 225

<sup>2</sup> - Պրոֆ. Զ. Կիրակոսյան, նշվ աշխ.





## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ԿՆՔՎԱԾ ԹՈՒՐԹՄԵՆՉԱՅՈՒՄ 1828 թ. փետրվարի 10-ին<sup>3</sup>

Հանուն Ամենագոր Աստծո.

Ամենապայծառափայլ, Ամենահզոր, Մեծն թագավոր եւ Ամենայն ռուսաց Ինքնակալ Նորին Կայսերական Մեծությունը եւ Նորին Մեծություն Պարսկական Փառիշափը հավասարապես մղված պատերազմի աղետավոր հետեւանքներին վերջ դնելու, պատերազմ, որ միանգամայն հակառակ է իրենց փոխադրած դիտավորություններին, եւ հաշտություն հաստատելու միջոցով երկու Պետությունների միջեւ նախկին բարիդրացիական եւ բարեկամական հարաբերությունները հաստատ հիմքի վրա վերականգնելու անկեղծ ցանկությամբ, հաշտություն, որն իր իսկ մեջ ամփոփելով իրեն ամրության երաշխավորությունը, գալիք ժամանակներում կկանխի անհամաձայնությունների եւ թյուրիմացությունների բոլոր պատճառները, սույն փրկարար գործը կատարելու համար իրենց Լիազորներ նշանակեցին. Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը իր գեներալ-թեֆերանտ, Կովկասի Առանձին կորպուսի Հրամանատար եւ այն Իվան Պասկևիչին, եւ իր Իսկական Պետական Խորհրդական Ալեքսանդր Օբրեզկովին, իսկ Նորին Մեծություն Պարսկական Շահը՝ Նորին վսեմություն Աբբաս-Միրզային: Սույն լիազորները հանդիպելով Թուրքմենչայ գյուղում, իրենց տրված լիազորությունները ճանաչելով պատշաճ վիճակում եւ դրանք փոխանակելուց հետո, որոշեցին եւ կնքեցին հետեւյալ հոդվածները.

**Հոդված 1.** Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրի եւ Նորին Մեծություն Պարսկական Շահի, նրանց թագաժառանգների եւ հաջորդների, նրանց Տերությունների եւ երկու կողմերի հպատակների միջեւ հետ այսու առհավետ թագավորելու է խաղաղություն, բարեկամություն եւ կատարյալ համաձայնություն:

**Հոդված 2.** Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը եւ Նորին Մեծություն Պարսկական Շահը հարգելով այն, որ բարձր պայմանավորվող կողմերի միջեւ ծագած եւ այսօր բարեհաջող դադարած պատերազմի հետեւանքով ավարտվեցին նաեւ երկու կողմերի հավասար ուժ ունեցող Գյուլիստանի պայմանագրի պարտավորությունները, հարկավոր համարեցին հիշյալ Գյուլիստանի պայմանագիրը փոխարինել սույն պայմաններով եւ որոշումներով, որոնք պետք է Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ առաջիկայում հաստատեն ավելի ու ավելի հաշտ ու բարեկամական հարաբերություններ:

**Հոդված 3.** Նորին Մեծություն Պարսկական Շահը իր անունից եւ իր թագաժառանգների եւ ժառանգորդների անունից Ռուսական Կայսրությանն է զիջում որպես նրա կատարյալ սեփականությունը Երեւանի խանությունը՝ Արաքսի այս եւ այն կողմերում եւ Նախիջևանի խանությունը: Այս զիջման հետեւանքով Նորին Մեծություն Շահը խոստանում է սույն պայմանագրի ստորագրման օրից հաշված վեց ամիս ոչ ավելի ժամանակամիջոցում ռուսական

իշխանություններին հանձնել այն դիվաններն ու հրապարակած վավերագրերը, որոնք վերաբերում են վերոհիշյալ երկու խանությունների կառավարմանը:

**Հոդված 4.** Երկու բարձր պայմանավորվող կողմերի համաձայնությամբ երկու Պետությունների միջեւ սահմանը որոշվում է համարել հետեւյալ գիծը՝ սկսած թուրքական տիրույթների սահմանի այն կետից, որն ուղիղ գծով ամենից մոտ է փոքր Արարատի գագաթին, սահմանագիծը կառաջանա մինչեւ այդ լեռան գագաթը. այնտեղից նրա թեքությամբ կիցնի մինչեւ Արարատի հարավային կողմից սկիզբ առնող Քարասու գետի վերին հոսանքը. այնուհետեւ սահմանագիծը այս գետի հոսանքի ուղղությամբ կշարունակվի մինչեւ Շերուրի դիմացը գտնվող այն կետը, որտեղ այս գետը թափվում է Արաքսի մեջ. այս կետից սկսած սահմանագիծը Արաքս գետի հունով կընթանա մինչեւ Աբբաս-Աբաղ ամրոցը. այստեղ, սույն ամրոցի արտաքին ամրությունների մոտ, որոնք գտնվում են Արաքսի աջ ափում, սահմանագիծը կես աղաջ, այսինքն՝ ռուսական 3,5 վերստ երկարությամբ շառավիղով կառաջացնի շրջագիծ, եւ այս շրջագծի մեջ ընկած հողատարածությունը ամբողջապես կպատկանի բացառապես Ռուսաստանին, եւ հաշված սույն օրից պետք է մեծացույն ճշտությամբ բաժնեհատվի երկու ամսվա ընթացքում: Սկսած այն տեղից, որտեղ հիշյալ շրջագիծը արեւելյան կողմից կհատի Արաքսի ափին, սահմանագիծը վերստին առաջ կգնա սույն գետի հունով մինչեւ Եդիբուլուքի ժամադրուտը. այնտեղից պարսկական տիրույթը կտարածվի՝ Արաքս գետի հունով 3 աղաջ, այսինքն ռուսական 21 վերստ տարածության վրա. այնուհետեւ սահմանը կանցնի ուղղակի Մուղանի տափաստանի վրայով մինչեւ Բոլդարու գետի այն կետը, որը Օդինաբազարն է Սարիղամիշ գետերի միացման տեղից ընկած է 3 աղաջ, այսինքն 21 վերստ հեռավորության վրա: Այնտեղից սահմանագիծը Բոլդարու գետի ձախ ափով կշարունակվի հոսանքն ի վեր մինչեւ հիշյալ Օդինաբազար եւ Սարիղամիշ գետերի միացման տեղը. հետո արեւելյան Օդինաբազար գետի աջ ափի երկարությամբ սահմանը կձգվի մինչեւ գետի վերին հոսանքը, իսկ այնտեղից՝ մինչեւ Ջիբրիլյան բարձունքներն այն հաշվով, որ այս բարձունքներից դեպի Կասպից ծովը հոսող բոլոր ջրերը՝ պատկանեն Ռուսաստանին, իսկ դեպի Պարսկաստան հոսող բոլոր ջրերը՝ Պարսկաստանին: Քանի որ այստեղ երկու պետությունների միջեւ սահմանը անցնում է լեռների գագաթներով, ապա որոշված է, որ նրանց թեքությունը դեպի Կասպից ծովը պետք է պատկանի Ռուսաստանին, իսկ հակառակ թեքությունը պատկանի Պարսկաստանին: Ջիբրիլյան բարձունքներից սահմանագիծը ձգվում է Թալիշը Արշի գավառից անջատող լեռների վրայով մինչեւ Կամար Կույ բարձունքը: Ջրերի հոսանքը երկու կողմի վրա անջատող լեռնային կատարները այստեղ կառաջացնեն սահմանագիծ ճիշտ այնպես, ինչպես վերն ասվեց Օդինաբազարի եւ Ջիբրիլյան բարձունքների միջեւ ընկած տարածության մասին: Այնուհետեւ ջրերի հոսանքի նկատմամբ վերը շարադրված կանոնի անընդհատ պահպանմամբ սահմանագիծը Կամարքույի բարձունքից առաջ կգնա Չուվանթը եւ Արշի գավառները բաժանող լեռնաշղթայի երկարությամբ մինչեւ Վեյջիքի գավառի սահմանը: Այսպիսով, Ռուսաստանին կմիանա Չուվանթը գավառը, բացառությամբ նրա այն մասի, որն ընկած է հիշյալ լեռների հակառակ կողմում: Վեյջիքի գավառի սահմանից սկսած երկու Պետությունների միջեւ ընկած սահմանագիծը ջրերի հոսանքի վերաբերյալ արդեն հիշատակված կանոնին համապատասխան առաջ կշարժվի Կոպուլթի գագաթներով եւ Վեյջիքի գավառով անցնող գլխավոր լեռնաշղթայի երկարությամբ մինչեւ Այթարա գետի հյուսիսային ակունքը. այնտեղից այս գետի հունով, մինչեւ նրա՝ Կասպից ծովը թափվելու տեղը, ուր եւ ավարտվում է ռուսական տիրույթները Պարսկաստանից անջատող սահմանագիծը:

**Հոդված 5.** Նորին Մեծություն Պարսկական Շահը որպես ապացույց Ամենայն ռուսաց Նորին Մեծության Կայսրի նկատմամբ ունեցած իր բարեկամության, սույն հոդվածով ինչպես իր, նույնպես եւ պարսկական գահի իր ժառանգորդների եւ հաջորդների անունից հանդիսավոր կերպով ընդունում է, որ վերը նշված սահմանագիծի եւ Կովկասյան լեռների ու Կասպից ծովի միջեւ ընկած բոլոր հողերն ու բոլոր կղզիները, ինչպես եւ այդ երկրներում ապրող բոլոր քոչվոր եւ մյուս ժողովուրդները առհավետ պատկանում են Ռուսական

<sup>3</sup> - Չ. Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ Սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում: Երևան, 1972:

Կայսրությանը:

**Հոդված 6.** Նորին Մեծություն Պարսկական Շահը հաշվի առնելով երկու պետությունների միջև ծագած պատերազմի հետևանքով Ռուսական Կայսրությանը պատճառած զգալի վնասները, ինչպես նաև ռուսահպատակների կրած կորուստներն ու վնասները, պարտավորվում է դրանք փոխհատուցել դրամական վարձատրությամբ: Երկու բարձր պայմանավորվող կողմերը որոշեցին, որ սույն վարձատրության ժամկետները, վճարման կարգն ու ապահովումը որոշված են հատուկ պայմանագրով, որը կունենա այնպիսի ուժ, ինչպես եթե այն բառ առ բառ մտցված լիներ սույն Պայմանագրի մեջ:

**Հոդված 7.** Քանի որ Նորին Մեծություն Պարսկական Շահը հարմար գտավ իրեն հաջորդ եւ գահաժառանգ նշանակել Օգոստոսափառ Ռոդուն՝ Աբբասյան Աբբաս-Միրզային, ապա ուրեմն Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը, Նորին Մեծություն Պարսկական Շահին հրապարակով ապացուցելու համար իր բարեկամական համակրանքը եւ սույն ժառանգական կարգի հաստատմանը նպաստելու ցանկությունը, պարտավորվում է այսուհետև ի դեմս Օգոստոսափառ Նորին Բարձրություն արքայազն Աբբաս-Միրզային ճանաչել Պարսկական Թագի հաջորդին եւ ժառանգորդին, իսկ նրա Գահ բարձրաստիճան հետո, նրան ճանաչել որպես սույն Տերության օրինական թագավորը:

**Հոդված 8.** Ռուսական առևտրական նավերը առաջվա պես իրավունք ունեն ազատ նավարկել Կասպից ծովում եւ նրա ափերի երկայնքով, ինչպես նաև հանգրվանել այնտեղ. նավարկության դեպքում պետք է որ Պարսկաստանում նրան ցույց տրվի ամեն տեսակի օգնություն: Նույն ձեռով պարսկական առևտրական նավերին իրավունք է տրվում նախկին կարգով նավարկել Կասպից ծովում եւ հանգրվանել ռուսական ափերում, որտեղ նավարկության դեպքում պետք է որ փոխադարձաբար նրանց ցույց տրվի ամեն տեսակի օգնություն: Ինչ վերաբերում է ռազմական նավերին, քանի որ շատ հնուց լոկ ռուսական ռազմական դրոշ կրող նավերը կարող էին նավարկել Կասպից ծովում, ապա այս պատճառով նրանց այսօր եւս տրվում է եւ հաստատվում նախկին բացառիկ իրավունքն այն առումով, որ Ռուսաստանից գատ ոչ մի այլ տերություն չի կարող ռազմական նավեր ունենալ Կասպից ծովում:

**Հոդված 9.** Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը եւ Նորին Մեծություն Պարսկական Շահը բոլոր միջոցներով ցանկանալով ամրացնել խաղաղության եւ բարեկամության դաշինքը, որն այնքան երջանիկ կերպով վերականգնել է նրանց միջև, հանձնեցին, որպեսզի ժամանակավոր հանձնարարություններ կատարելու կամ մշտական պաշտոնավարության համար այս կամ այն պետությունն ուղարկվող երկու կողմերի բարձր Արքունիքների Դեսպանները, Մինիստրները եւ գործերի հավատարմատարներն ընդունվեն իրենց կոչմանը, բարձր պայմանավորվող կողմերի արժանապատվությանը, նրանց միացնող անկեղծ բարեկամությանը եւ տեղական սովորույթներին համապատասխանող մեծարանքներով եւ զերադասությամբ: Այս նպատակով հատուկ արձանագրությունով կորոշվի այս եւ մյուս կողմի հսկողության հանդիսակարգը:

**Հոդված 10.** Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը եւ Նորին Մեծություն Պարսկական Շահը երկու Պետությունների միջև առևտրական հարաբերությունների վերականգնումն ու ծավալումն ընդունելով որպես վերականգնված խաղաղության ամենագլխավոր բարերար հետևանքներից մեկը, լիակատար փոխադարձ համաձայնությամբ բարվոք համարեցին առևտրի հովանավորությունն ու երկու կողմերի հպատակների անվտանգությանը վերաբերող բոլոր կարգադրությունները մշակել եւ դրանք շարադրել սույն ազգրավող առանձին արձանագրության մեջ, որը կնքված լինելով երկու տերությունների Լիազորների կողմից, կա եւ կլինի սույն կնքված հաշտության պայմանագրի հավասարազոր մասը: Նորին Մեծություն Պարսկական Շահը առաջվա պես Ռուսաստանին իրավունք է վերապահում Հյուսիսայտոսներ կամ առևտրական Գործակալներ ունենալ բոլոր այն վայրերում, որտեղ առևտրի շահերը կպահանջեն այդ բանը եւ պարտավորվում է այդ Հյուսիսայտոսներին եւ Գործակալներին, որոնցից յուրաքանչյուրն իր շքախմբով կարող է ունենալ տասը մարդուց ոչ ավելի, ցույց տալ հովանավորություն, որպեսզի նրանք օգտվեն հրապարակական կոչմանը շնորհիվ մեծարանքներից ու

արտոնություններից: Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրն իր կողմից խոստանում է հսկել, որպեսզի նորին մեծություն Պարսկական Շահի Հյուսիսայտոսներն ու առևտրական Գործակալներն օգտվեն այդ նույն իրավունքներով: Այն դեպքում, եթե Պարսկական Կառավարությունը իրմնավորված գանգատ կներկայացնի ռուսական Գործակալի կամ Հյուսիսայտոսի դեմ, ռուսական Մինիստրը կամ Նորին Մեծություն Շահի Արքունիքում Ռուսական գործերի հավատարմատարը, կամ թե նրանց անմիջական Պետը մեղավորին կհետաքննի պաշտոնից եւ իրենց հայեցողությամբ ժամանակավորապես այն կհանձնեն մեկ այլ անձնավորության:

**Հոդված 11.** Երկու կողմերի հպատակների բոլոր պահանջները եւ պատերազմի պատճառով դադարած մյուս գործերը կվերականգնվեն եւ համաձայն արդարությանը իրենց լուծումը կստանան հաշտության կնքումից հետո: Երկու կողմերի հպատակների միջև եւ այս կամ այն կառավարության գանձարանում եղած պարտքի հանձնարարությունները պետք է ստանան անհապաղ եւ լիակատար բավարարություն:

**Հոդված 12.** Չօգուտ երկու տերությունների հպատակների պայմանավորվող բարձր կողմերը որոշում են նրանց ընդհանուր համաձայնությամբ՝ Արաբսի երկու կողմերում անշարժ գույք ունեցողներին տալ եռամյա պայմանաժամ, որի ընթացքում նրանք կարող են ազատ վաճառել կամ փոխանակել իրենց անշարժ գույքը. բայց Նորին Մեծություն Ամենայն ռուսաց Կայսրը որ որպես վերաբերում է իրեն, սույն ներողամիտ կարգադրությունից հանում է Հուսեյն Խանին, Երեւանի նախկին սարդարին, նրա եղբորը՝ Հասան Խանին եւ Նախիջեւանի նախկին կառավարիչ Քերիմ Խանին:

